Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԻՍՐ ԶՈՒՂԱՅԻ ՏՊԱՐԱՆ ՈՒ ԻՐ ՏՊԱԳՐԱԾ ԳՐՔԵԼԸ

655(47.925)(09)
017.4

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

Գայլգաչյան Գիգուր. Հակարանքի
Դատարանները
Երևան
Լ. Գ. Մինասյան
Երև. Բուհ
24/II-17

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՏՊԱՐԱՆՆ ՈՒ ԻՐ ՏՊԱԳՐԱԾ ԳՐՔԵՐԸ

(1636_1972)

Ա II/51415

Տպարան «Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ» Վանքի
Նոր-Ջուղա

1972



Զօնում եմ

Իրանի առաջին տպարանի հիմնադիր

Խաչատուր վրդ. Կնարացու

Անմեռ յիշատակին

Իրանի կայսրութեան 2500 ամեակի

Առիթով



ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ԿԵՍԱՐԱՅԻ

Սոյն գրքոյկը տպագրեալ է ի յիշատակ

ՈՎԿԻԱՆՈՍ ՄԱՐՏԻՆԻ

Իր եղբօր՝ Սարգիս Մարտինի մեկենասութեամբ,
որին յայտնում ենք մեր ջերմ
շնորհակալութիւնները։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սրտի անխառն հրճուանքով կ՚ողջունեմ հրատարակութիւնը Լեւոն Մինասեանի նեւրկայ գրքին, որով ան հայ բանաստեղծութեան կը բերէ նոր նպաստ մը, հայ տպագրութեան պատմութեան շրջանէն մեկը գիտութեան լոյսին տակ սեւեռելով։

Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ Վանքի տպարանը Հայ ժողովուրդի լուսաւոր ոգեշունչ ոգեւորմի պերճախօս վկայութիւններէն մեկն է։ Հայաստանի հողէն պոկուած, հայրենական ժառանգութիւններէն զրկուած մի բուռ ժողովուրդի հոգեւորական եւ լուսապատ զարակներ, պատելի համեստութեան, բուռ աշխատանքի ախոյեան վանականներ, Խաչատուր Վարդապետ Կեսարացիի շուրջ բոլորուած, 17-րդ դարու սկզբին, Պարսկաստանի այս հողաշերտին վրայ *ստեղծեցին, հնարեցին* մամուլ ու տառ, բանաք ու բուղբ եւ մարդկութեան կեանքի մէջ բացուած նոր լոյսի աղբիւրին՝ տպագրութեան ճառագայթը տարածեցին հայ կեանքին վրայ։

Շա՜տ է գրուած հայոց պատմութեան այս լուսաւոր էջի մասին։ Գիրքերու մէջ, յօդուածներու մէջ յաճախ անդրադարձումներ են կատարուած հայկական մշակութային այս նուաճումին շուրջ։ Բայց լայն տարողութեամբ, գիտական պրպտումներով եւ մասնաւորապէս 17-րդ դարու տպագրական արտադրութիւններու մանրա-

մասն նկարագրությամբ եւ լիբասակարանների վերաբերությամբ ամբողջական հրատարակություն մը այս հատորով է. որ կը մատուցուի հայ հասարակությանն Նոր-Ջուղայի հայ մտաւորականներէն բանաստեղծ Լեւոն Մինասեանի հեղինակությամբ։

Ինձ համար յատուկ արժէք եւ մեծ նշանակություն ունի ուսումնասիրական բաժնին հետեւող ընդարձակ ցուցակը, որուն մէջ յատկորէն եւ կարելի ամբողջականությամբ կ՚արտացոլայ Նոր-Ջուղայի Հայոց պատմական տպարանի դարաւոր վաստակը։ Երկար տարիներու տքնաջան փնտռտուքներու եւ բանասիրական հետախուզությանն յատուկ հետեւողական աշխատանքի արդիւնքն է այս բաժինը, որուն համար մասնաւոր գնահատանքի արժանի է Լ. Գ. Մինասեանը։

*

* *

Տպագրությունը ազգի մը քաղաքակրթությանն զարգացման հիմնական լծակներէն մէկն է։ Տպարանի մամուլի խժալուր ձայնը քաղաքակրթությանն համերգին նախերգանքն է։ Մեզ համար պատի՛ւ է. որ մեր հայրերը իրենց գերազոյն ասիճանի ջանքերով, երբեմն հայկական նախանձախնդրությանն, զոհողությանն ոգիի արտայայտությունն եղող հերոսական նուիրումով հնարաւոր վենետիկի, Ամստերդամի, Լվովի Լիվոռնոյի, Հռոմի, Մարսելի խուճապեալ տպարանական գործատեղիներու մէջ հայ գիրքեն տպել 1512 թուականէն սկսեալ եւ հետզհետէ տպարանի անիւները դարձուցեր հասցուցեր են դէպի Պոլիս ու Կալկարա եւ ի Հայաստան։

Միջին Արեւելքի մէջ, ներառեալ մեր հայրենի հողը՝ Հայաստան, *առաջին հայատեղծ ու ինքնահնար տպարանն է հանդիսացեր Նոր-Ջուղայի տպարանը։* Այն ժողովուրդը որ 17-րդ դարուն տպարան է հիմներ, չի կրնար 20-րդ

դարուն տպարանը··· բանգարան փոխադրել։ Տպագրութիւնը այսօր ալ, եւ մանաւանդ այսօր, գործնապաշտ, նարտարարուեստականօրէն այսքան յառաջացեալ այս դարուն, պէտք է զարկ տանայ մեր հայկական կեանքին մէջ, թէ՛ Նոր-Ջուղայի, թէ՛ այլ գաղթօճախներու մէջ։ Խաչատուր Կեսարացիներու, Յովհաննէս Քրոէնց վարդապետներու յիշատակը այն ատեն կը բառամի երբ դանդաղի կամ դադարի մամուլի բաւալող գնացքը այս վանքի շրջարակին մէջ։—

Ահա թէ ինչու նոր թափ պէտք է տալ Նոր-Ջուղայի տպարանին երբ այս ժողովուրդը կը հաւատայ իր լուսատնչ կեանքի առաքելութեան եւ ուղղութեան։ Մեր ժողովուրդի լուսաւորութեան, անընդմէջ եւ յառաջադէմ զարգացման, վերածաղկման եւ վերակենդանացման հրամայական եւ նուիրական նպատակը, որ 20-րդ դարու հայ կեանքի պայծառ իրականութիւնն է. եւ նեանարանը միանգամայն, մեզ կը հարկադրէ որ առաւել եւս արդիականացնենք մեր պատմական տպարանը եւ նորանոր հրատարակութիւններով ճոխացնենք անոր դարաւոր վաստակը ի վայելումն յաստկապէս Նոր-Ջուղայի եւ ընդհանրապէս Բրազանայ մեր ժողովուրդի։

Վստահ եմ որ Ս. Ամենափրկիչ Վանքիս Տպարանի պատմական զարգացման եւ անցեալի արտադրութեան այս համայնապատկերը՝ պատրաստուած բարեխիղճ գիտական մօտեցումով եւ մերոտով Լեւոն Գ. Մինասեանի կողմէ, նոր գրգիռ եւ խթան կը դառնայ մեր տպարանի առաւել եւս արդիականացման եւ ճոխացման, միանգամայն ըլլալով կարեւոր նպաստ մը ընդհանուր հայագիտական ուսմանց։

Այս առթիւ նաեւ իմ ջերմ գնահատանքը կ՚ուզեի յայտնել Պրն. ՍԱՐԳԻՍ ՄԱՐՏԻՆԻՆ, որ սիրայօժար կերպով

ստանձնեց մեկնաբանությունը սոյն հատորին, ի յիշատակ իր բանկագին եղբօր՝ ՈՎԿԻԱՆՈՍԻՆ։

Այժմ հատորը կը պատկանի ժողովուրդին։

Կարդալ, իմանալ հայ ստեղծագործական ձեռնարկությունն այս վկայարանի մասին, առաւել նաև սիրել հայ "*Տիպն ու Տարը*", կապուած մնալու համար Ս. Մեսրոպի անզուգական եւ անմահական կտակին։

Ահա՛ բուն իմաստն ու նպատակը այս գողտրիկ հատորին։

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ
ԻՐԱՆԱ-ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԹԵՄԻՆ

Ս. Թարգմանչաց Տօն

14 Հոկտեմբեր, 1972

Ս. Ամենափրկիչ Վանք

Նոր-Ջուղա

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանը հանդիսանում է բովանդակ Իրանի և Միջին Արևելքի առաջին տպարանը, որի պատճառով էլ իր իրապատուկ տեղն ունի, թէ՛ այս շրջանի գարգացման ու վերելքի և թէ հայկական այս ուղղութեամբ տարուող ճիգերի ու աշխատանքների մէջ։

Վանքի տպարանի և նրա հիմնադիր Խաչատուր վրդ. Կեսարացու գործունէութեան մասին, թէև շատ է գրուել մեր և անգամ օտար մամուլում, բայց այդուհանդերձ նրա տարած աշխատանքների և տպարանի գործունէութեան լրիւ պատկերը, կարելի է ասել ցարդ տրուած չէ։ Այն թերեւս անգամ այժմ ևս հնարաւոր չէ տալ, երբ դեռ շատ հարցեր մնում են անորոշ ու առեղծուածային։

Տպարանի մասին, պարբերական մամուլի մէջ եղած բազմաթիւ յօդուածներից ու գրքերի մէջ եղած ուսումնասիրութիւններից բացի, Տիգրան Աբգարեանի կողմից, 1912 թուին, առաջին տպագիր հայ գրքի՝ «Պարզատումար»-ի 400 ամեակի առթիւ, տպագրուել է մի գրքոյկ «Նոր Ջուղայի Ամենափրկչեան Ս. Վանքի Տպարանը» խորագրով, իսկ 1962 թուին բանաստեղծ վիպագիր Յովհաննէս Ղուկասեանի կողմից, լոյս է ընծայուել մի ծաւալուն վէպ (666 էջ), «Ոսկան Երևանցի» անունով, ուր խօսում է Նոր Ջուղայում հիմնուած տպարանի և այդ օրերում եղած դժուարութիւնների մասին։

Դժբախտաբար անչեայը շատ գաղտնիքներ ու անծանօթ տեղեկութիւններ ունի իր ծոցի մէջ պահած, այնպէս

որ շուրջ 350 տարի անցնելուց յետոյ էլ նոր տեղեկութիւններ ու մութ մնացած խնդիրներ են Երևան գալիս և միանգամայն փոխում ու գլխիվայր շրջում մինչ այժմ պարզ ու որոշ համարուած երևոյթները։

Օրինակ, գրանցից յիշենք նոր յայտնաբերուած «Սաղմոս»-ը, որը տպագրել է 1638 թուին։ Մինչ այդ 1641 թուին տպագրուած «Հարանց վարք»-ը, համարւում էր կեսարացու տպարանից լոյս տեսած առաջին գիրքը։ 1941 թուին տպագրուած «Խորհրդատետր»-ը միայն վերջին տասնամեակում Երևան եկաւ և մինչ այդ «Ստեղի ժամագիրք»-ն էր, որ համարւում էր երկրորդ տպագրուած գիրքը։

Ներկայիս գեռեւս ձեռքի տակ չունենք Յովհաննէս վարդապետի տպագրած թերի «Աստուածաբանչ»-ից անգամ մէկ թերթ։ Ստոյգ տեղեկութիւններ չունենք նաեւ յայտնի ուղեցիր Թաւերնիէի յիշատակած «Գօղոսի բուդրմ»-ի մասին։

Մինչեւ վերջերս չէինք տեսել նաև 1647 թուին տպագրուած «Պարզատումար»-ը։ Ոչ մի տեղեկութիւն չունենք նրանց հրատարակած այլ «բաղում» գրքերի մասին։ Դժբախտաբար առաջին տպարանի այդ գրքերի մեծ մասը, ինչպէս 19-րդ դարի վերջերի և սոյն դարի սկիզբների մի շարք դասագրքեր ու սրացոյցներ ևս չեն պահւել։ Զեն պահւել անգամ վանքի գրապարան-մատենադարանում։

Այս գրքոյկով նախ պէտք է տան տպարանի հիմնման պարագաները, ապա նրա գործունէության յաջորդական փուլերն ու տպագրուած գրքերի լրիւ ցանկը, ինչպէս նաև որպէս յաւելուած Սպահանում եղած հայկական այլ տպարաններին մասին համառօտ տեղեկութիւններ։

Աւելի լուսաբանման համար, այստեղ նկարագրում

ենք 17-րդ դարում տպագրված բոլոր գրքերը, թվով ութը հատոր և բերում դրանց լրիվ յիշատակարանները։

Որպես նմոյշ գրքի մեջ դրվում են առաջին տպագիր գրքերի անվանաթերթերից ու յիշատակարաններից մի քանի էջեր, հին տառատեսակներ, մամուլներին մաս կազմող և նրանց վերաբերող մի քանի նկարներ, ինչպես և մեկ օրինակ Յովհաննէս վարդ. Քթրշենցի կողմից Եւրոպայից բերված քլիշեներից։

Նոր-Զուղա

25 Յունիս 1971 թ.

Լ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳԻՒՏՆ ՈՒ ՀԱՅԵՐԷՆ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հայոց լեզուի նշանագրերի գիւտից, մինչեւ տպագրական գիւտը, ընդդրկում է իր մէջ աւելի քան մէկ հազարամեակ։

Այս տասը դարերի ընթացքում, հայ գրչագրութիւնը, իր սկզբնական ու նախնական վիճակից, շարունակ ձգտեց դէպի գրչութեան ու գեղագիր-մանրանկարչութեան բարձունքները, դէպի նուրբն ու գեղեցիկը և եկաւ հասաւ մինչև թղթից աւելի նրբին մագաղաթներին ու ոսկեզօծ ու գունագեղ մանրանկարների չգերազանցւող արուեստին։

Եթէ աւելի վաղ սկսած լինէր տպագրութեան գիւտը, իր բերած բարիքով, թերեւս մենք այսօր զուրկ լինէինք գրչութեան արուեստի ունեցած մեր թանկարժէք գանձերից ու մանրանկարչութեան նրբաճաշակ պատկերներից։

Ըստ բնութեան օրէնքի, իւրաքանչիւր նոր արարուած ու գիւտ, որոշ ժամանակ ու շրջան անցնելուց յետոյ, պէտք է հնանայ ու ծերանայ և իր տեղը զիջի նրանից բղխած ու նրանից յետոյ եկած աւելի զարգացած երեւոյթի ու կատարելագործուած գիւտի առջև և այդպէս շարունակաբար ու յաջորդաբար։

Այսպէս եղաւ և դրչութեան խնդրում, որին յաջորդեց տպագրութիւնը, իր զարգացման հոլովոյթներով։

Տպագրութեան գիւտը սեղի ունեցաւ գերմանացի Յովհան Գուտենբերգի ձեռքով 1445 թուին, իսկ առաջին գիրքը տպագրուեց մէկ տասնեակ տարի յետոյ՝ 1455 թուին։

Այս գիւտից հազիւ եօթանասուն տարի անցած, Վենետիկում Յակոբ Մեղապարտի կողմից տպագրուեցին հայերէն լեզուով առաջին գրքերը, որոնք են՝ «Պարզատումար» (1512 թ.) *), «Պատարագատետր» (1513), «Ուրբաթագիրք», «Աղբարք» և «Տաղարան»։

Առաջին տպագրիչ Յակոբից յետոյ, երկրորդն եղաւ Աբգար գպիր Թոքատեցին կամ Եւդոկիացին, որ նոյնպէս Վենետիկում 1565 թուին տպագրեց հայերէն առաջին օրացոյցը «Խառնափնդուր տումարի գնդնցիկ եւ պիտանի» անունով։

Վենետիկից յետոյ երկրորդ վայրը, ուր հայերէն տպարան է աշխատել, եղել է Կ. Պոլիսը, որտեղ իր տպարանը տեղափոխել ու գրքերի հրատարակութիւնը շարունակել է Աբգար Գպիրը 1567 թուին։

Հետագայում յաջորդաբար հայկական տպարաններ են հիմնուել Հռոմում՝ 1594 թուին, Լեռվում՝ 1616 թուին, Միլանում՝ 1621 թուին, Փարիզում ինչպէս և այլ վայրերում ևս հայերէն գրքեր են տպագրուել, բայց դրանք չեն եղել հայ տպարաններ։

Հայկական տպարանների հիմնման 7-րդ տեղը պատկանում է Նոր-Ջուղային, ուր տպարան է հիմնուել առաջ-

*) Համաձայն Հայկ Տեր Ասատուրեանի տուած տեղեկութեան «Բառարան հայ կենսագրութեանց» (Թիֆլիս 1904 թ.) ինքը տեսել է 1485-1486 թուականներին եւրոպական լեզուով մի գիրք, որի մէջ ս. գրից հատուածներ են տպագրուած եղել, որոնց հետ նաեւ հայերէն լեզուով եւ երկաթագիր տգեղ տառերով Սաղմոսից մի հատուած։

նորդ Մաշատուր վրդ. Կեսարացու ջանքերով 1636-1637 թուականներին, իսկ առաջին գիրքը տպագրուել 1638 թուին։

ԽԱՉԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՏՊԱԳՐԱՆԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Մաշատուր վրդ. Կեսարացին, համարուում է Ամենափրկիչ վանքի արժանաւոր ու ժրաջան առաջնորդներից մէկը, որ թէև յետոյ եպիսկոպոսական աստիճան է ստացել, բայց և միշտ էլ ժեր գրականութեան մէջ յիշուում է վարդապետական պարզ աստիճանով։

Կեսարացին նախքան 1620 թիւը Մովսէս կաթողիկոսի կոնդակով, որպէս նուիրակ գնում է Նոր-Ջուղա. նրա նուիրուած գործունէութեանն ու երիտասարդական եռանդին ի տես, մանաւանդ որ արդէն ծերացել ու տկարացել էր Ջուղայի առաջին առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը, տեղի ժողովուրդը սիրով է կապուում նրա հետ և խնդրում է կաթողիկոսին որ նրան նշանակէ որպէս իրենց առաջնորդ։

Կեսարացին 1620 թուին ստանձնելով Ջուղայի թեմի առաջնորդական պաշտօնը, շուտով ընդլայնում է տեղի կրթական գործը և նոր շունչ ու եռանդ մտցնում։

Շուրջ մէկ տասնամեակ տեղում աշխատելուց յետոյ, երբ 1630 թուին որպէս նուիրակ գնում է Յունաստան և Լեհաստան, Նիկոլ Թորոսովիչի վէճին վերջ տալու համար, Եւրոպայում տեղեկանում է տպագրուած գրքերի մասին և կամ նոյնիսկ տեսնում, ու երբ Նոր-Ջուղա է վերադառնում, ինքն ևս ձեռնարկում է գրքեր տպագրելու դժուարին աշխատանքին։

Վանքի միաբան հայրերը, այդ օրերում, իրենց նեղ-

լիկ խուցերում, որ շարված էին գլխաւոր մուտքի հիւսիսային կողմում, զբաղւած էին դրշութեան արւեստով, որոնց աշխատանքի պանպաղ ընթացքը չէր կարող բաւարարել մի լուսամիտ ու եռանդուն առաջնորդի, ուստի նա մտածում է ինքն ևս հիմք դնել տպարանի, երբ միանգամայն անծանօթ էր տպագրութեան արւեստին, ինչպէս որ իրաւամբ նա գրում է իր առաջին տպագրած գրքի՝ «Սաղմոս»-ի յիշատակարանում հետեւեալ բառերով.

«Զի ոչ եմք տեսեալ ի վարպետ. եւ ոչ ունիմք ուսուցիչ, բայց միայն զհոգին սուրբ. եւ զիրդս եւ զկենդանի աղօթս հոգեւոր Հօրն մերոյ զնացելոյ առ Տէր»։

Տպարանական աշխատանքներն սկսւում են դեռևս 1636 թւից. վանքի ողջ միաբանութիւնը լծւում է ծանր ու դժւարին աշխատանքի, տնային միջոցներով պատրաստում են մամուլ, թուղթ, մելան, տառեր և ձեռնարկում գործը գլուխ բերելու, որի աշխատանքները տևում է մէկ տարի և հինգ ամիս և 1638 թւին տպագրւում է Զուղայի առաջին գիրքը «Սաղմոս»-ը։

Ինչպէս որ մինչև այժմ յայտնի է, Խաչատուր Կեսարացու ժամանակ Զուղայի տպարանում տպագրւել են չորս գիրք, որոնք ըստ թւականների հետեւեալ պատկերն են ներկայացնում.

1.	«Սաղմոս ի Դաւիթ»	1638 թ.
2.	«Հարանց Վարք»	1641 թ.
3.	«Խորհրդատետր»	1641 թ.
4.	«Փամագիրք Աստնի»	1642 թ.

Սոյն թւականները նրանց աւարտման թւականներն են, ուստի այդ հերթականութեամբ էլ ստորեւ առանձին առանձին անդրադառնում ենք իւրաքանչիւրին, բերելով դրանց լրիւ յիշատակարանները։

ԿԵՍԱՐԱՑՈՒ ՏՊԱԳՐԱԾ ԳՐՔԵՐԸ *)

1. ՍԱՂՄՈՍ ԴԱՒԻԹԻ

«Սաղմոս Դաւթի»-ն կամ գիրքի ուներցած հարազատ խորագրով «Սաղմոս ի Դաւիթ» գիրքը, Խաչատուր վրդ. Կեսարացու տպարանից լոյս տեսած առաջին հրատարակութիւնն է, որը մինչև 1968 թիւը, այսինքն շուրջ 330 տարի անյայտ էր մնացել մեր բանասէրներին։ **)

«Սաղմոս»-ը տպագրուել, կամ աւելի ճիշտ, տպագրութիւնը աւարտուել է 1638 թուին. տպագրական աշխատանքը տևել է մէկ տարի և հինգ ամիս, ինչպէս որ ասում է գրքի յիշատակարանը։

Գիրքն ունի 572 էջ. 15. 2 × 8. 5 սմ. չափուածք։ Անուանաթերթ չունի. առաջին էջի վերևում ունի մի ճակա-

---

*) Սոյն գրքերի մասին մի երկուսի ոչ լրիւ յիշատակարանների, խօսել է նաև «Բանասիրական առաջին Տպարանը» յոդուածում։ (Տ. Պողոսեան «Բանբեր Տարեգիրք» Երևան, 1970 թիւ, Բ. տարի, էջ 301 — 319)։

**) Այս մասին աւելի մանրամասն տեսնել «Ալիք» (Երևան, 1969 թ. 18 Հոկտ.) կամ «Այգ» (Բեյրութ, 1969 թ. 23 Հոկտ.) օրաթերթերում։

Գրքից մէկ օրինակ ունի միայն Օմսիորդի Բոդլէյեան գրադարանը, որի առաջին թերթի եւ գլխաւոր յիշատակարանի լուսանկարները շնորհակալութեամբ ստացել ենք նոյն գրադարանի արեւելեան բաժնի վարիչ պրն. Դէյվիդ Բարրեցից եւ երաժիշտ պրն. Մանուկ Բարիֆեանից, իսկ գրքի երկրորդական յիշատակարանները պրն. Խաչիկ Տէր Գրիգորեանից։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՀՆԱՐՔ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ Գ. ՉԱՐԱՆ
ԱՍՏԱՂԱՏՈՒՆ
A 51415

տագարդ. իսկ նրա ներքևում, որպէս խորագիր գրուած է «Սաղմոս Դաւիթ», որից անմիջապէս յետոյ սկսւում է Սաղմոսը՝ «Երանեալ է այր որ ոչ գնաց ի խորհուրդս ամբարեաց....»։

Մեծատառերը ընդհանրապէս ունեն երկաթագիր տառեր, իսկ ոմանք էլ տպուած են հաւքագրերով։

Վերջում ունի չորս էջից բաղկացած յիշատակարան, որի առաջին մասում տրւում է Մովսէս Սիւնեցի Կաթողիկոսի համառօտ գործունէութիւնը, իսկ յետոյ «Սաղմոս»-ի տպագրութեան հանգամանքներն ու դրան մասնակից մի քանի հոգևորականների անունները։

*Ստորև բերում ենք գրքի գլխաւոր յիշատակարանը։ *)*

«Փառք նոանցնոյ տերութեան եւ միագոյ բնութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն արքոյ որ եւս կարողութիւն տառապեալ անձանցս հասանել յաւարս գրոյս։ Բայց սակայն Զարբոյ եւ գամենեցուանիկ առն Աստուծոյ. զտեառն Մովսէսի կաթուղիկոսի զվարսն եւս. համառօս բանիւ կամիմք յայտ առնել։ Էր սա ընտրեալ սիւնեաց։ Ի տիս մանկութեան արբասէր եւ պոռնիկ եւ պահացող. հնգ հանդարս բարուք։ Որ եւ յարեցաւ ի մեծ կաթուղիկոսն Սրապիոն. անհանգիստ երկամբ աշխատեալ լրնթերցումն աստուածատուն տառից. եւ ընտ մահուան կաթուղիկոսին, ընկալաւ իշխանութիւն եւ գաւազան ի Գրիգոր վարդապետէ կենարացոյ։ Եւ ըստ շնորհելոյ նմա յաստուծոյ. յորդառատ վարդապետութեամբ եւ բարի խոստովանութեամբ լուսաւորեաց զազգս հայկազանց եւ արար բազում ուղղութիւնս։ Նախ զի զեղծեալ կարգս եկեղեցոյ. որ ի թուլութիւնէ առաջնոցն խանգարեալ էր. վերստին

---

*) Այս, ինչպէս եւ միւս գրերի յիշատակարաններ, բերում ենք իրենց հարազատութեամբ, բացելով միայն համառօտագրութիւններ։

ուղղեաց։ Երկրորդ ի բազում տեղիս յանապատս կարգեաց խարազնագղեաց ճգնաւորաց։ առանց միանգամայն ի կանանց։ Յոր ժողովեցան ուր քաւն ի երեսուն։ ուր վաթսուն ի հօրանաւուն զի անդադար աղօթեցին։ ի ինքն որպէս զհայր հաստատակաց խնամ տանէր ամենեցուն։ զմարմնաւոր պէտս նոցա լինով։ Երրորդ յամենայն տեղիս։ ի շենս ի յաւանս անբիւ եկեղեցիս շինեաց ի քաւանս։ որով հաւաս քրիստոնէութեան ծաղ-



1638 թուի «Սաղմոս»-ի յիշատակարանի Ա. էջը

կեալ պայծառացան։ Չորրորդ զսուրբս էջմիածինն նոր նորոգեալ զարդարեաց և պայծառացոյց անբուկի ծա-

խիւ։ որ զտնսօղսն հիացուցանէ։ Հինգերորդ ընկալեալ զկաթուղիկոսութիւն եւ դիմեաց առ արքայն պարսից։ եւ զդիմառական հարկն որ յառաջնոց Կաթուղիկոսացն եղեալ էր ի վերայ սուրբ Էջմիածնայ։ բազում ջանիւ զուն զործեալ վերացոյց եւ արար ազատս ի հարկապահանջութենէ։ Վեցերորդ յամենայն տեղիս դասատուն եւ դպրոցս կարգեաց եւ լուսաւորեաց զազգս հայոց եւ յարաժամ ցանկայր տպագրութեանս զի յառաջութենէ զրոց ամենեքեան դիւրաւ վարժեցին։ սակայն չեղեւ ծնունդս։ զի փոխեցաւ ասի յանանց կեանսն առ ցանկալին իւր։ յորում ծարաւին էր եւ արտասուօք ժամէր միտս։ կացեալ Կաթուղիկոս չորս ամ եւ չորս ամիս որոյ յիշատակն աւրհնութիւնամբ եղիցի։ Եւ յաջորդեաց զաթոռ նորա Տէր Փիլիպպոս ծնունդսուն աշակերտ իւր։ Եւ յաւուրս սորա եղեւ տպագրութիւնս ի քաղաքն Շոր։ յանապատն Ջուղայոյ։ ի թվին ՌԼԶ եւ է (1638)։ Զնոամբ նուաստ խաչատուր վարդապետի կենարարոյ։ որ տարի մի է եւ հինգ ամիս։ որ զցայգ եւ զցերեկ անդադար աշխատիմ հանդերձ միաբան ուխտիս զի ոչ եմք տեսեալ ի վարպետէ եւ ոչ ունիմք ուսուցիչ։ բայց միայն զհոգին սուրբ։ եւ զիղձս եւ զկենդանի աղօթս հոգեւոր հօրն մերոյ գնացելոյ առ տէր եւ են ծնունդս եւ օժանդակ զործոյս հոգեւոր որդեակքն իմ վարպետ Յակոբնանն։ եւ տէր Յովհաննէս քահանայն։ եւ տէր Միքայէլն եւ Յովսէփն։ վասն որոյ յիշեցէք ի մաքրափայլ աղօթս ձեր զնուաստ խաչատուր վարդապետս։ եւ զծնունդս եղբարսն իմ։ եւ դուք յիշեալ լիջիք ի քրիստոսէ ասուածոյ մերոյ որ է աւրհնեալ յաւիտեանս ամէն։ Հայր մեր որ յեր։

ՓԱՌՔ ԱՊԷՆԻԱՁ ՏԵԱՌՆ ՈՐ ԵՏ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱՆԻՄԱՍՏ ԱՐԱՆՑՍ ՀԱՍԱՆԵԼ ՅԱԻԱՐՏ ԵՐԳԱՐԱՆԻՍ ԴԱԻԹԻ Ի ԹՈՒԻՆ ՌԼԶ Է (1638) ՈՐՈՒՄ ՓԱՌՔ ՅԱԻԻՏԵԱՆՍ »։



ՓԱՆՈՓԱՊԷՏԻԱՆՑ ՊԱՏԵՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆ ԵՒ ԱՆԴԵՌՆԱՒԱՐՔԵՐ ԳԱՐԱՆԻՍ ԴԱՒԹԻ Ֆ ԹՈՒԹՈՒՆ, ՈՒ ՁԷ ՊՊՈՒՄ ՓԱՆՈՓՅԱԼԻՏՔԵԱՆՑ

1638 թ-ի «Սաղմոս»-ի յիշատակարանի վերջին էջը։

Գլխաւոր յիշատակարաններից բացի գրքի 60, 129, 268 և 341 էջերում ևս ունի փոքր յիշատակարաններ, որոնք ևս բերում ենք այստեղ.

1. «Յիսուսի ի մահրափայլ յաղօթս ձեր ով հանդիպողք զաւխատողս ի սմա» (էջ 60)։

2. «Աւգնեա սուրբ հոգի աւխատողացս» (էջ 129)։

3. «Սաղմոս ի Դաւիթ Աւգնեա սուրբ հոգի հասանել յաւարս» (էջ 268)։

4. «Զաւխատողս ի սմա զնուաստ Խաչատուր վարդապետս եւ զվարպետ Յակոբճանն եւ զյանապատիս միա-

բանին, որ բազում աշխարհաբար հոգիս կարացավ գալս չափս ի յայս բերել թվին ՌԾԷ (1638)» (էջ 311)։

2. ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

«Հարանց վարք»-ը Զուզայի տպարանից լույս տեսած երկրորդ գիրքն է, որն իր ծաւալով պերազանցում է Մաշտոցը Կեսարացու կողմից տպագրած միւս գրքերին։

Համաձայն գրքի յիշատակարանին, տպագրութիւնը աւարտել է 1641 թ-ին։ «Հարանց վարք»-ը, որ հոգևոր հայրերի՝ ճգնաւորների կեանքն ու մի շարք մոլութիւնների ու խրատական գրածքների ժողովածու է, ինչպէս որ ասում է «Հայելի վարուց յորում կան պատմութիւն հեշտալուրք և բանի օգտակարք առ ի փրկութիւն մարդկան», իր տեսակի մէջ մի կոթողական գործ է, նորահիմն մի տպարանի համար։

Գրքի ծաւալն է 24·5 × 8·5 սմ., շարածքը՝ 17 × 12·5 սմ.։ Ունի 705 էջ, երկսիւնակ տպագրութիւն։ Էջերը համարակալուած են հայկական թուանշաններով՝ Ա-ՉԵ (1-705)։ Սկզբում և որոշ գլուխներում ունի ճակատագրեր և մէկ կիսախորան (էջ 9)։ Տառերը կոկիկ են ու մանրատառ։ Գիրքն անուանաթերթ չունի, սկսւում է «Ցանկ է, Գլխաւոր բանից։ Հարանց վարուց սուրբ գրոց»-ով, որ բռնում է մօտ մէկ և կէս սիւնակ։ ապա առաջաբանն է՝ ութ էջ, իսկ յետոյ էջ Ժ-ՁԴ (10-70։) վարքագրութիւնն է և ՁԴ-ՁԵ (704-705) երկու սիւնակով յիշատակարանը։ *)

Գրքի տպագրութեան հանգամանքների մասին աւելի լայն գաղափար տալու համար, ստորև առաջ ենք բերում լրիւ յիշատակարանը։

---

*) «Հարանց վարք»-ից վանքի գրադարանում կայ երկու օրինակ (մէկը թերի)։ Իսկ բանգարանում մէկ օրինակ։

«Թառք ամենասուրբ երրորդութեան. հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. որ են կարողութիւն տառապեալ անձանցս հաստատեալ յաւուրս զորս որ կոչի Հարանց վարք. թվին Ռ. Ղ. (1641) ի քաղաքն Շամախոյ. գրա-

1641 թիւ «Հարանց վարք»-ի կիսախորան.

նապատն Նոր Ջուղայոյ. Ի բազաւորութեան պարսից Շահ Սեֆոյն. Եւ ի հայրապետութեան Տէր Փիլիպպոսի. յիշխանութեան գիւղաքաղաքին Ջուղայոյ. իշխանաբուխ Պարոն խոջայ Սարգսապին իմաստնոյ և բարեպաշտի. Զեռամբ նուաստ Խաչատուր վարդապետի կնաւորացոյ. ի բազում աշխատութեամբ հանդերձ միա-

բան ուխտիս հագիր կարացաք այլապես ի յայս բերել։ Զի ոչ ուրաք յուսեցէք. եւ ոչ տեսանել ի վարպետ. Այլ ի տեսչութենէ հոգւոյն. եւ աղօթիք հոգեւոր հօրն մերոյ Տէր Մովսէս Կաթուղիկոսի փոխեցելոյ առ Տէր. Որ կրկին յուսաւորիչ եղեւ Հայկազանց ազգիս հոգեւոր ուսուցիչն զաւուրս Էջմիածինն. եւ զեղծեալ կարգս մեր որ ի թուրութենէ յառաջնոց Զոր Տէր Աստուած մեր թող երկոտասան վարդապետացն. դասակից եւ պատակից արասցէ. ամէն։

Յիշեաջիք եւ զհոգեւոր որդեակին իմ զտէր Սիմէօն վարդապետն. եւ զտէր Դաւիթ վարդապետն, որ յայսմ ամի ընտրեցան Աստուծոյ տուաք գաւազան երկոցունցն. եւ զպատուական ծերունի Տէր Մկրտիչն. Դա եւ զաշակերտակից սոցին. զտէր Բաղդասարն, զտէր Սահակն, զտէր Յովհաննէսն, զտէր Նիկողայոսն, զտէր Միքայէլն, զտէր Աւետիսն, զՅովսէփն, եւ զմեծ Յովանէսն. Եւ այլ ես բազու

ռութեանս։ Եւ պակասութեան սորին անմեղադիր լերուք։ Եւ որ յիսուս յիշեալ լիցի ի Փրխասոսէ ի միւս անգամ գալստեանն որ է օրհնեալ այժմ եւ անդրաւ յաւիտեանս ամէն։ Հայր մեր որ։ »։

Ց. ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

« Խորհրդատետր » - ը կամ « Պատարագամատոյց - ը հանդիսանում է Մաշտոցը Կեսարացու տպագրած երրորդ գիրքը։ Թէև սրա մասին յիշատակութիւն եղել է մեր



1641 թ. « Խորհրդատետր » - ի առաջին էջը

բանասէրների կողմից, բայց իրականում գիրքը յայտնաբերուել և լրիւ նկարագրուել է վերջին տարիներում։ *)

Ինչպէս յիշուեց «Հարանց Վարք»-ի նկարագրման ժամանակ, սոյն գրքոյկը աւարտուած լինելով նրա հետ միաժամանակ՝ 1641 թուին, պէտք է ընդունել որ այն տպագրուել է «Հարանց վարք»-ից յետոյ, ուստի և պէտք է այն համարել Զուղայի առաջին տպարանի երրորդ գիրքը։

«Մորհրպատեար»-ը, ինչպէս անունն է ցոյց տալիս, մի գրքոյկ է, բաղկացած 48 էջից և բաժանուած 6 գրքակի, իւրաքանչիւրը չորսական թերթով (կամ 8-ական էջ)։

Համարակալուած է հայկական թուանշաններով՝ Ա-ԽԷ (1-47), էջահամարների մէկ թուի պակաս առաջացել է 44 և 45 (ԽԴ և ԽԵ) էջերի միջոցում չհամարակալուած մէկ էջի պատճառով։ *)

Գիրքն ունի 17×12·5 սմ. ծաւալով շաբաթք, նիւթը թուղթ է, հաստ ու գեղնաւուն, նման «Հարանց Վարք»-ի թղթին, տպուած է երիսիւնակ։ Առաջին էջի սիւնակի վերևում ունի մի ճակատագիր։ Էջերը շաբաթած են խոշոր գրերով, իսկ վերնագիրները մանր բոլորագրով։ Մանրերը նման են «Հարանց վարք»-ի, իսկ խոշոր գրերը՝ «Աւետի ժամագիրք»-ի տառերին։

Միւս գրքերի նման այս ևս գուրկ է անուանաթերթից, սկսւում է «Եր զգեցեալ ես ...»-ով։

Տպագրութեան համար գործ է ածուած երկու գոյնի՝ սև և կարմիր թանաք։ Կարմիր թանաքով են Ա. Գ. Ե. և

*) «Էջմիածին» ամսագիր 1962 թ. համար ԺԲ. էջ 46 եւ «Սիոն» ամսագիր 1966 թ. Յուլիս, էջ 357։

*) Էջմիածին ամսագրում (նոյն համար) գրուած է 47 էջ, նոյնը եւ «Հայ հնատիպ գրքում» (էջ 12)։

Ը. Էջերի մի քանի վերնագրերն ու մեծատառերը Մեծատառերից ոմանք հաստքագրեր են, իսկ մյուսները երկաթագրեր։

Անուանախերթի նման գիրքը զուրկ է նաև կանոնաւոր յիշատակարանից։ Գրքի վերջում շատ մյատ ձևով ունի երկտողեան մի յիշատակարան, հապիս մէկ անուանով ու թուականով, որ բերում ենք այստեղ։



1641 թ. «Սարգատեար»-ի յիշատակարանը

«Եվ սուրբ գասարագոր յիշա զնապատուր վարդապետս ես գմայր իմ բին Ի՚Ղ. (1641) կարգեցի»

4. ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ

«Ժամագիրք Ատենի»-ն կամ իր ընդարձակ խորագրով «Սաղմոսացն Դաւթի եւ կարգաւորութիւն հասարակաց աղօթից նկնդնցեալց Հայաստանեաց» գիրքը, տպագրեալ կամ, ասենք, տպագրութիւնը աւարտեալ է 1642 թուին, որով և հանդիսանում է Ջուղայի տպարանի չորրորդ գիրքը։

Աշխատանք է տարեալ տառերը խոշորացնելու, որի պատճառով էլ գրքի մի մասը՝ սկզբից մինչև էջ ՈՁ (606), որ ժամագրքի վերջն է, շարուած են խոշոր, իսկ յետոյ փոքր տառերով, որ դարձեալ աւելի մեծ են քան «Հարանց վարք»-ի տառերը։

Գիրքն ունի 695 էջ *), որոնք համարակալուած են հայկական թուանշաններով Ա-ՈՂԴ (1-694 և չհաշուած 1), շարուածքի ծաւալն է 13×17 սմ։ Ունի մի կիսախորան էջ Յ Ը (308)-ում, նման «Հարանց Վարք»-ի զարդանկարին, մի քանի ճակատագարդեր որոշ տեղերում, ինչպէս և մի քանի թոշնագիր մեծատառեր։

Մինչև էջ ՈՁ (606) ժամագիրք-Սաղմոսի վերջն է, որի յիշատակարանը՝ «Փառք ի համագոյ...» գտնուում է էջ ՈԳ (603)-ից ՈՁ (606)-ում։ Ապա էջերի սխալմունքով կրկին համարակալուած է էջ ՈԳ (603) որ տօնացոյցն է և սկսուում է այսպէս.

«Փաղոց ամսոյ։ Հայոց ի Ա (1)ն եւ դեկտեմբեր հռոմայեցւոց ի Բ (2)։

«Սաղմոս»-ն սկսուում է մոռացութեամբ մի չհամարակալուած էջից, որ գտնուում է էջ ԼԵ (25) և ԼԶ (26)-ի

---

*) Ժամագրքից Ն. Ջ. վանքում կայ երկու օրինակ, որոնք երկուսն էլ ընրի են սկզբից եւ վերջից։ Էջերի լրիւ թիւը վերցրել ենք «Հայ հնատիպ գրքի մաս. ցուցակ»-ից (էջ 13) եւ «Սիոն»-ից (1967 թ. Յունւ. Փետր. էջ 57-59)։

միջոցում։ Այս գիրքը սկզբում ունեցած Սաղմոսի պատճառով։ մեր բանասէրներից ոմանց կողմից անուանւել է նաև «Սաղմոս»։

Կիսախորան 1642 թ-ի «Ատենի ժամագիրք»-ի

Վանքի թանգարանի օրինակն սկսւում է 7-րդ (է) էջից և շարունակւում մինչ էջ ՈՁ թ. (689)։ էջ ՈՁԳ-ում (683) ունի մի ճակատագարդ։ ապա.

«Երգեցէք ուղիղ Սիովնի։
Էակից հոր եւ հոգոյ...» ոտանաւորը։

Գլխաւոր երկու յիշատակարանից բացի։ ունի երկու

այլ փոքր յիշատակարաններ ևս, որոնք գտնւում են ՌԲ (602) և ՌԿԳ (663) էջերում։

Այդ յիշատակարաններն են։

Ա.

«Ով վայելող սուրբ մատենիս,
Մաղթեմ յիշել զեղկելիս,
Զարիալ տարօղ տառիս,
Դարի արդոյ երգարանիս,
Նաև յիշել մաղթեմ ընդ իս և զԱարգիսն
Ամն ելնօղ թղթի և մրիս,
Միսն գինուցօղ և տպօղ քարտիս»։

Բ

«Ով տնաստեր յիշեսցիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՍիմեոն վարդապետն»։

Վերյիշած առաջին յիշատակարանից առաջ ունի, մի «Դովասանութիւն Մաղմոսին» բանաստեղծութիւն, որը բաղկացած է 16 տնից և սկսւում է այսպէս.

«Բանք Մաղմոսիս է պատուական,
Լցեալ հոգւովն Աստուածական,
Որք ի յասելն օժարանան,
Անքայքայեանն արժանանան....»։

Երկու գլխաւոր յիշատակարանները գտնւում են առաջինը Ա. մասի (Ժամագրքի) վերջում (էջ 603-606), իսկ եկրորդը՝ գրքի վերջում (էջ 700-701?), որոնք քերում ենք ստորև։

Ա. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ.

«Փառք համագոյ զուգափառ.....»։

Որոյ ամենասաս շնորհիւն յանկելեալ կատարեցաւ տպագրութիւն հոգեւնուագ Մաղմոսացն Դարի ընդ ամին և կարգաւորութիւն հասարակաց աղօթից զեկեղեցեաց Հայաստանեաց։

Յամի հազար եւ ինսներորդի եւ միակ թուոյ յամսեանն Հայոց Տրէի երեք, եւ հոսմայնցոց Յունվարի ի երկոտասան, Յաշխարհիս պարսից Արքայանիստ քաղաքիս ըստ զրոց Շօշ կոչեցելոյ, որ այժմ Ասպահան արտաքայնի, ի գեաղաքաղաքիս Նոր-Ջուղայու, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչի վանիցս, որ է մենաստան կուսակրօնից բանասիրաց, ի բազաւորութիւն պարսից Շահ Սաֆուն,

Եւ ի դիտապետութեան հայոց հանուրց սնոր, Տեառն Փիլիպոսի երիցս երանեալ երջանիկ հայրապետի, Եւ ի վերատեսչութեան նահանգիս ընդհանուր Պարսկաստանի հնգահոգի արհի եպիսկոպոսի եւ շնորհազարդ վարդապետիս, Տեառն Խաչատրի որ է բնիկ ազգաւ ի Կեսարիա քաղաքէն որոյ ջանիւք եւ աշխատութեամբն եղեւ տպագրութիւնս այս ի մէջ տոհմիս հայկազեանց, Քանզի այս ամէներջանիկ վարդապետս Խաչատուր որ ըստ որէ. տեսանէր զտպագրութիւնս ի մէջ ազգացն լատինացւոց ցանկայր միտս որպէսզի լիցի ի մէջ Հայաստանեաց եւս, Եւ յարաժամ խնդրէր հնարս գիւս արուեստիս այսորիկ եւ իբրեւ ոչ գտաւ ուստիք առ ի լնուլ զփափաք ցանկութեան իւրոյ, ապաւինեալ այնուհետեւ ի հոգին սուրբ որ բաշխէ զշնորհսն իւր առատապէս որք յուսանին սակաւ աշխատիլ իւրով միաբան ուխտիւն մինչ զի կատար էհան զտպագրութիւնս եւ սփռեալ տարածեաց զգիրս ի մէջ հայաստանեացս, որ եւ ժամագիրքս զայս աշխատասէր կամօք ջանացեալ յաւարտ էհան ձեռամբ իւրով, որ եւ մաղթեմ վայելողացդ եւ պատահողացդ զի խնդրեսջիք ի Քրիստոսէ սմա երկարակեաց խաղաղութեամբ առողջ կեանքս, Եւ յետ ասի կենացս ընդ սրբոց աշխատաջան վարդապետացն դասաւորիլ ի փառս Աստուծոյ ամէն,

Այլ եւ խնդրեմ անմեղադիր լինել սակս անյարմարութեան քանզի ամենեքին ի վարպետաց ոչ է տեսեալ այլ իւրով հանճարովն ըստ պարգեւելոյն սմայ ի հոգոյն

արդոյ այսման յայտ ածեալ երեսեցոյց վասն օգտի բազմաց։

Ընդ արդոյ երջանիկ հօրս յիշել մարդիմ զմաքրասուն աշակերտեալ մանկունս իւր։ զտէր Միքէլն քաջ և արի ասուածապրան վարդապետն որ է աղբեր իմաստութեան։ և հնգաձոզի տէր Դաւիթ վարդապետն ճշգաստէր և



1642 թ. «Ատենի ժամագիրք»-ի յիշատակարանից

զծերունի տէր Մկրտիչն։ և զտէր Բաղդասար վարդապետն։ և զՅովհաննես վարդապետն։ որ զնացեալ երջի յաշխարհին լատինացւոց որպէսզի ուսեալ ի նոցանէ և եկեալ ուղղեցէ և հաստատեցէ զսա ի մէջ հայաստանեաց։ ընդ որս յիշեալ աղերսեմ և զայլ աշակերտեալ արբամիս

սարկաւագունցն, զՏէր Աւետիսն խոհեմ, զԽաչատուրն, զՍիմէօնն, զԴալուսն, զՍահակն, որ միտ աշխատին ի վերայ գործառնութեանս, ոմանք արբագրելով եւ այլք կազմելով։ Այլ եւ յիշել հայցեմ ի սուրբ աղօթս ձեր, Զմեծ Յովանէսն այր քաջազօսի, որ է վերակացու սուրբ ուխտիս որպէս հայր հասարակաց խնամէ զամենեսեանս։ Նաեւ զծերունի խոհարար զտէր Յուսիկն, որ ծեր գոլով սպասաւորութիւն առնէ եղբարցն ամենեցունց, որոց Քրիստոս լիցի վարձահատուց ըստ վաստակոց իւրեանց։

Ընդ սոցին յիշել պարտիմ եւ զիս զտառապեալ հէքս զկրկին մարդով խօրացեալ Սիմէօնս կարօս բանի, որ տկար անձամբ սակաւ ինչ աշխատեցայ ի վերայ արբագրութեան սորա հինգ կանոնի չափ եւ ի վերայ տանցուցին զբլխովին իսկ»։

Բ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ *)

«Գիտասջիք ով տնաստէր զի մեծ եւ երանելի հայրապետն Տէր Մովսէս որ նորոգեաց զՍ. Էջմիածինն, որոյ ըստ արժանոյն գովասանութեան առաքինասէր վարուցն եւ աշխատաջան վաստակոցն որ ի վերայ կարգաց եկեղեցւոյ եւ կրօնից հաստատութեանց ունէր այլում բողից ասել եւ կամ բաւական համարեալ մեր զման զառաջագոյն ասացեալսն։ Սա ինքն վերոյասացեալ սուրբ հայրս մեր սահմանեաց տասն շարական ասել օրհնութիւն վասն բազում խորհրդոյ տասնեակ բուոյն։ Այլ եւ վկայ ածելով զմեծ փիլիսոփայն. եւ զհաւատարիմ քահանայապետն զսուրբն Ստեփաննոս։ Որ զաւագ օրհնութիւնքեւրն տասն տասն շարական արար եւ ոչ աւելի կամ նուազ. ըստ տասն դասուց բանականաց նմանապէս եւ սրբազան

*) Վանքի ունեցած օրինակը թերի լինելով, այս յիշատակարանը վերցրել ենք «Սիոն» ամսագրից (1967 Յունե. Փետր. էջ 58-59)։

հայրս կանգնեաց տաճն շարական ասել օրհնութեան ի փառս Քրիստոսի և արդոց նորա։ Եթէ հանեցին կամք եղբայրութեան ձերոյ տեառն գոնութիւն և եթէ ոչ ախորժիցէք կամք ձեր եղիցին։ Իսկ՝ զմեզ ի մեղադրանաց և ի բամբասանաց ազգս բողոք աղաչեմք։ Եւարս էաւ ժամագիրքս բոլորովին ի թուին հայոց Ռ. Ա. և Ա. (1612) Յապրիլ ամսոյ ԻԱ. (21)։ Հնարհոք Քրիստոսի Աստուծոյ մերոյ տեառն ամենակալի։ Որ է. օրհնեալ յաւիտեանս ամէն։ Խնդրեմ ի ձեզ որ պատահիցէք այսմ տպագրութեան յիշեցիք ի սուրբ յաղօթս ձեր զաշխատողսն այսմ տպագրութեանս։ Զտէր Յակոբն։ զՄարգարէն։ զԲաղդասարն։ զՄարգիսն և զԱգարեանն։ Զնոսին և զուրաս Սիմէօնն որ սակաւինչ աշխատեցեալ ի վերայ արբագրութեան սուրա։ Եւ որ յիշէիդ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծմէ մերոյ։ որ է. օրհնեալ յաւիտեանս ամէն։»

Խալատուր Կեսարացւոյ. տպարանը, որ իր տեսակի մէջ կարելի է գիւտ համարուիլ եկրորդ գիւտը համա-



Առաջին տպարանից տաճարաշար կաղապարների նմոյշներ

ռելու շատ կարճ կեանք է ունեցել։ Հազիւ վերոյիշեալ չորս գիրքը տպագրելով, ըստ հասած տեղեկութեանց, եղած հա-

կառակուսիների պատճառով, այրել է տպարանն ու մամուլը, որից ներկայիս մնում են միայն որոշ թվով տառեր և մի քանի տառաշարի կաղապարներ։

Այս տպարանի մասին խոսում է նաև վիպագիր Յովհաննէս Ղուկասեանը իր «Ոսկան Երևանցի» ծաւալուն վէպի մէջ։ *) ուր գեղեցիկ ձևով տալիս է այն ճիգերն ու պայքարը, որ տարուում էր տպագրիչ հոգևորականների և գործը խանգարող հակառակորդների միջև։



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ

ԻՒ ԸՆԴՈՒԷԹԻՒՆ

Առաջին տպարանից տառատեսակներ

Խաչատուր Կեսարացին պատկանում է ժրաջան ու լուսամիտ այն հոգեւորականների խմբին, որոնք իրենց հանգիստն ու դպարը մոռացած, լծուում են ազգային ու մշա-

*) Յովհ. Ղուկասեան «Ոսկան Երեւանցի», Երեւան 1962 թ.

կութային աշխատանքների, լոկ ժողովրդին ծառայելու և ի փառս հայոց ազգի։

Կեսարացին ծնել է 1590 թ-ին և 26 տարի, սկսեալ 1620 թ-ից, վարել է Ջուղայի առաջնորդական պաշտօնը։ Վախճանել է 1646 թ-ին, 56 տարեկան հասակում և թաղել վանքի Տաճարի սեղանի ներքևի նկուղում, որն և դարձել է ժողովրդի ուխտատեղի։

Ստորև բերում ենք տապանաքարի արձանագրութիւնը.

«Ի հանգստի աստ ամփոփի,
Մամուր մարմին վարդապետի,
Խաչատրոյ Սրբազանի,
Հնտուղի Տեառն Յիսուսի,
Որ էր տեղեաւ Կեսարացի,
Գործով սուրբ հնգ և արի,
Բարձեալ յուս գլուծ Քրիստոսի,
Առաջնորդէ նորին հօտի,
Երեսնամեայ յայս գործ յանձնի,
Սմա նստիլ յայսմ աթոռի,
Կրէ յանձին զվարս անմարմնի,
Մնա մինչև յիսուն վեցի,
Յաղցաւորացս նա զատի,
Հազար Ղ (ինն սուն) և Ե (հինգ) բուի»։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՔԹՐՇԵՆՑ

ԵՒ

ԻՐ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ջուղայի տպարանը զարգացնելու և լաւ ու նոր հիմքերի վրայ դնելու համար, Խաչատուր Կեսարացին, առաջին գրքի տպագրութիւնից յետոյ, իր ուշիմ աշակերտներից մէկին, Յովհաննէս վրդ. Քթրշենցին, ուղարկում է

Եւրոպայ տպագրական անհրաժեշտ աշխատանքներին ծանօթանալու և նոր գիտելիքներով ու մամուլով վերադառնալու համար։

1647 թուի «Պարզատումար»-ից մի զարդակալ

Յովհաննէս վարդապետի Եւրոպա գնալու մասին, առաջին անգամ յիշատակուած է «Ատենի ժամադիրք»-ի յիշատակարանում (էջ 605), ուր ասուած է.

Եւ զՅովհաննէս վարդապետն. որ գնացեալ երթի յաւխարհին լատինացւոց որպէսզի ուսեալ ի նոցանէ եւ եկեալ ուղղեսցէ եւ հաստատեսցէ զաս (տպարան Լ. Մ.) ի մէջ հայասանեաց»։

Երկրորդ մեզ ծանօթ հին աղբիւրը, որ խօսում է Յովհաննէս վարդապետի Եւրոպա գնալու մասին, Խաչատուր

աբեղայ Ջուղայեցին է, որ իր «Պատմութիւն պարսից» գրքում (Վաղարշապատ, 1905, էջ 118), այսպէս է գրում.

«Յովհաննէս յոգնեալս վարդապետն, որ գնաց ի Իտալիայ հրամանաւն արքայ եւ մնծի հօրս մերոյ Խաչատրոյ հրանաւնորհ վարդապետին, զի անդէն ուսցէ զարհեստս տպագրութեան եւ յօրինեալ բերցէ ի Նոր-Ջուղայ ի գերանոչակ մենաստանս ուխտի մերոյ, որոյ չունալ յարեալից ի յարեւմուտս գնաց ի Իտալիայ, եօթն ամ կացեալ եւ աշխատեալ, զկնի լրման գործոյն, առեալ եաւ յոգն ճգամբ զգործարան տպագրութեանն ի յարեւմտից յարեալս ի Նոր-Ջուղայ»։

*Համաձայն վերոյիշեալ վկայութեանց, Յովհաննէս վարպապետը Եւրոպայում մնում է եօթը տարի՝ 1639-1646 թիւը և շրջում զանազան երկիրներ՝ Վենետիկ, Հռոմ և այլուր, որի ընթացքում կանգ է առնում Լիվոռնոյ քաղաքում, ուր 1644 թ-ին տպագրութեան է յանձնում «Գիրք եւ Սաղմոսք Դաւթի որ եւ Սաղմոսարան կոչի» գրքոյկը և ուղարկում իր ուսուցիչ Մաշատուր Կեսարացուն *»։*

Յովհաննէս վարդապետն իր տպագրական աշխատանքների ընթացքին, Եւրոպայի այլ յարանուանութեանց պատկանող կղերականների կողմից ենթարկւում է խիստ հալածանքի, բայց այդուհանդերձ յաջողում է իր առաքելութեան մէջ և 1646 թ-ին վերադառնում է Նոր-Ջուղա իր հետ բերելով Մամուլ ու տառեր։

Մինչեւ Յովհաննէս վարդապետի վերադարձը վախճանւում է Մաշատուր Կեսարացին, զրկելով նրան իր պաշտպանութիւնից ու հովանաւորութիւնից, որի պատճառով էլ

---

*) Այն գիրքը մենք չենք ունեցել ձեռքի տակ, որի մասին տեղեկութիւններ կան գրած մի էարք գրքերում, որոնց թւում եւ «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»-ում (Երեւան, 1963 թ. հմր. 38, էջ 14)։

հանդիպում է խիստ հակառակութիւնների ու դժուարութիւնների։

Այս առթիւ կրկին խօսքը տանք Խաչատուր Ջուղայեցուն (նոյն, էջ՝ 118)։

«Բայց յորժամ դարձաւ ի լիտալիոյ նգիս վախնանալ զգերամնծար հայրն մեր Խաչատուր վարդապետն, ուստի թէպէտ ի յոմանց անընդունելիք նղեալ նրաբխեալ աբխստութիւնք նորա, սակայն ոմանք բարեպատէք եւ նախանձայոյզք անձինք զզործս նորա ընկալան յօժարակամ սրտիւ եւ յոգնարդեամբ զնա նպաստաւորեցին»։

Յովհաննէս վարդապետն իր ունեցած դժուարութիւններով հանդերձ, 1647 թուին տպագրում է «Գիրք տումարաց որ եւ պարզատումար կոչի» գիրքը, ապա ձեռնարկում է տպագրելու «Աստուածաշունչ»ը, որ մնում է թերի, սոյն ժամանակներում նա տպագրում է նաև «Պօղոսի թուղթք» հատուածը և այլ «բազում» գրքեր, ինչպէս որ ասում է Խաչատուր աբեղան։

Ստորև համառօտ ձևով, ըստ մեր ունեցած ժլատ տեղեկութիւնների, անդրադառնանք այդ լրիւ ու թերի մի քանի գրքերին, որոնք են.

1. «Գիրք տումարաց որ եւ պարզատումար կոչի» 1647 թ.
2. «Աստուածաշունչ» 1650 (?) թ.
3. «Պօղոսի թուղթք» 1650 (?) թ.

1. «ԳԻՐՔ ՏՈՒՄԱՐԱՑ ՈՐ ԵՒ ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ ԿՈՉԻ» գիրքը տպագրուել է 1647 թուին, ունի 84 էջ և 8.9×6 սմ. չափսաձք։

Վանքի տպարանից լոյս տեսած այդ օրերի գրքերի մէջ, այս միակն է որ ունի անուանաթերթ, գրքից մէկ օրինակ ունի Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը.

որի միայն անուանաթերթն ու չորս էջով յիշատակարանն *) ենք ունեցել ձեռքի տակ, որ բերում ենք ստորև.



1647 թ-ի «Պարզատումար»-ի անուանաթերթը

ԳՐՔԻ ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹԸ.

«ԳԻՐՔ ՏՈՒՄԱՐԱՑ ՈՐ ԵՒ ՊԱՐԶԱՏՈՒՄԱՐ ԿՈՉԻ, Զոր փոխարկեալ եղեւ ի յամսոց եւ ի տումարաց Հռոմայեցւոց, ի յամիսս եւ ի տումարս Ազարիայի կոչեցելոյ։

Զնոսամբ նուաստ Յովհաննէս վարդապետի, Զուղացւոյ. առ Հակերտի մեծին խաչատրոյ կենարացւոյ։

---

*) Դրքի անուանաթերթի ու յիշատակարանի լուսանկարները, որոնք ծանօթություններով, ընդհակալուրեամբ ստացել ենք Հայր Եփրեմ Պողոսեանի միջոցով։

Որ եւ տպագրեալ անեցոյց զսա, յամին որ ի ծնընդենեն Քրիստոսի, Ա. Ո. Խ. եւ Է (1647) ի սկիզբն, Յունիսի ամսոյ։ Իսկ ըստ Հայոց՝ Հազար եւ Ղ եւ Ե (1095) թուին։

Ի վայելուչ եւ ի թագաւորանիստ քաղաքն ի Տեղապօլիս այսինքն Շօշ, որ եւ Սպահան, ի տպարանի իւրում, զոր եաւ յարեւմտից ի սուրբ ուխտն Ամենափրկիչ։

Յօժարութիամբ սուրբ միաբանութեանս »։

Անուանաթերթից յետոյ եղած էջի շրջագարդի մէջ գծուած է մի սափորաձեւ ծաղկաման, զարդարուած ծաղիկներով, իսկ միջին մասում երկաթագիր տառերով գրուած է «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՋՈՒՂՅԻ »։

*Այժմ բերում ենք գրքի վերջում ունեցած չորս էջով յիշատակարանը։ *)*

« Առ բարեպաշտաւոր անձինսդ, ընթերցողաց։ վասն մեսնջենաւոր յիշատակի։

Ի Նուաս Ծառայի Աստուծոյ, Յովհաննէս Վարդապետ Ջուղացւոյ։

Զկնի հաւրնակի աշխատութեան, մերոյ որ Իտալիայ։ առեալ զգործարան տպագրութեան, բազում ենղութեամբ ածաք ի հայաստան, **) ակն ունելով մեծի շնորհակալութեան եւ պարգեւաց։ այլ ոչ եղեւ այնպէս, որպէս յուսայաքն, քանզի պատահեաց մեզ որպէս պատահեցաւ երբեմն եւ արքոց քերթողացն, եւ զի բեպէս յոյժ հեռու գտանիմ ի նոցանէ ըստ վարուցս, սակայն աշխատութեամբ ոչինչ կերպիւ նուազ երեւի վասակք իմ քան զնոցայն։ Վասնզի երանելք ***) հրամանաւ արքոց Թարգման-

---

*) Բերում ենք նոյնութեամբ, բացելով միայն կրճատագրերը։

**) Ուզում է ասել հայերի մէջ։

***) Լուսանկարի այդ մասը դժուար է ընթերցում։

չացն, դիմեցին ի յԱրևելս եւ մնծաւ ջանօք ասացեալ զգիտութիւնս, զարծան ի հայս, եւ զտին մեռեալ զաւուրք հայրապետն, եւ ի յայլոցն ոչ եղեն բնդունելիք, մեռոյ վասն եւ տրամեցան յոյժ, սոյնպէս եւ մեք, հրամանաւն աւուրք հօրն մերոյ Խաչատուր վարդապետին. բազում աշխատութեամբ զարհնաս զայս. ածեալ ի յարեւելից յարեւմուտս *). զտի զնա վախճանեալ, եւ եղեն անբնդունելիք աշխատութիւնք մեր՝ յայլոց, վասնորոյ եւ աղերկրգեալ ապաւաւեմ յոյժ, որպէս եւ յայնմամ հերոզին Այլ զի մի բնդունայնացացի աշխատութիւնք իմ. եւ ջանք վերացին իմոյ. նաեւ թերեւս շարժիցէ ոք ի նախանձ առաջանալոյ գործոցս. հայելով ի շահաւէտութիւն եւ արդիւնաւորութիւն տպագրութեանս. ապաւինեալ ի հոգին աւուրք ծնունդեանցի տալ զպարգասումարս. որ բաս Ա.զարիային, իբր ցուցանելով թէ ոչ զոյ պակասութիւն գործառնութեանս, եւ իցէ զի թէ ոչ յառաջացի արհնաս, լինիցիմ մեք անմեղադրելիք ի կողմանէ մեր, եւ օտար լիցի ասել զմենջ, թէ այրս այս ակամ էին աշտարակ եւ ոչ կարաց կատարել. բանզի շնորհօն աստուծոյ, որպէս ակամ՝ նոյնպէս եւ աւարտեցամ. բանզի ոչ միայն յիսալիայ, այլ եւ աստ ի տեղապօլիս ցուցամ արդեամբք. որպէս ահա յայտ, զի բնդ հասանել մեր ի Սպահան. տպեալ աւարտեցի զպարգասումարս. Յամին որ ի Ծննդեանն Քրիստոսի ՌԻԷ. Խ. եւ Է. (1647), Ի Հայրապետութեան, հայոց Տէր Փիլիպպոսի արքեպան կաթուղիկոսի, եւ ի բազաւորութեան պարսից նկրոզ Շահ Ապասին, եւ ի խնամակալութեան ժողովոյս մերոյ. բարեպաշտ եւ իշխանաւորք խոնայ Սարդարին եւ այլ ասուածասէր տօրվարաւորացն, յասացեալ բանաւորանիս հաղարն ի Տեղապօլիս, այսինքն ի Շօշ, որ եւ Սպահան եւ ի քրիստոնեամ գիւղաքաղաք ժողովոյն մերոյ, ի Զու-

*) Պէտք է լինի «յարեւմտից ի յարեւելս»։

ղայ, ի սուրբ ուխտն Ամենափրկիչ ի թվին ՌՂեւԵ (1646) ի սկիզբն Յուլիսի ամսոյ։

Զոր թէ է. ըստ հաճոյից ձերոց գոհութիւն տեառն. զի զտեառնէ. շնորհք եւ զտեառնէ գոհացարուք. եւ երբ ոչ ներեցէք իմում պակասութեանս եւ միայնութեանս զի բարց ուրուք ձեռնացուի եւ օգնականի սէր արտեցի զսա։ ի սպառուածս ամսոյ միոյ ԵՃ (500) ի միասին։ ի յիշատակ մշեցենաւոր եւ ի փառս Յիսուսի Քրիստոսի։



Մի էջ 1647 թ-ի «Պարզատումար»-ի յիշատակարանից

վասնորոյ աղաչեմ զձեզ զամենեսեանս, որ հանդիպիք սմա. ստանալով եւ վայելելով զսա. յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր. զամենեարջանիկ զխաչատուր վարդապետն, որ յայսմ ամի խաղաղութեամբ հանգեաւ

ի Քրիստոս։ Եւ զմինդէն եղբարան արդոյ ուխտիս։ ԶԴաւիթ վարդապետն։ զտէր Բարսեղն։ զտէր Հաչատուրն եւ զԵւագ սարկաւագունսն։ զԿոստանդիանոսն։ զԱմիրբէկն։ եւ զԻսահակն։ եւ զիս նուաստս զՅովհաննէս վարդապետս ջուղացի։ զկայացուցանօղ տպագրութեանս եւ զբարեպաշտ ծնօղս իմ։ զհայրն իմ հանգուցեալ զմահդասի Եսիկարն եւ զմայրն իմ զԱնամէլիքն եւ զեղբարս իմ եւ զամենայն արեան մերձաւորս զհոգեւորս եւ զմարմնաւորս։ ըզկենդանիս եւ զհանգուցեալս։ զի եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ։ Որ է օրհնեալ յաւիտեանս ամէն։ Հայր մեր։

Փառք հոգ Աստուած յամենայն ժամ եւ միշտ զոհանամ զքեզ։

ՎԵՐՋՆ Է ԳՐՈՅՍ»։

2. «Աստուածաշունչ». *տպագրութիւն Յովհաննէս վարդապետի, Նոր Ջուղա, իբր 1650 թուին։*

Աստուածաշունչի տպագրութեան մասին յիշատակութիւն ունի Խաչատուր աբեղայ Ջուղայեցին իր «Պատմութիւն պարսից» գրքում (էջ 121), որտեղ գրում է.

«Եւ եւ ընդ բազում գրեանց որ տպեցին։ սկսան ընդ որոց եւ տպել զԱստուածաշունչ գիրն։ այլ վասն մեղաց մերոց մնաց թիւակատար։ որպէս կայ մինչեւ ցայսօր ի մէջ մերում։ սա կարի լաւագոյն ունելով զբուղբն եւ զգիրն քան զառաջին տպեալ գրեանսն»։

Վանքի տպարանի առթիւ մեր ուսումնասիրութեան ընթացքին և այդ մասին եղած փնտռտուքների ու սրպտումների ժամանակ, ինչպէս և Ջուղայի դրապարանների ու եկեղեցիներին պատկանող դրների միջից, ցարդ հնարաւոր չի եղել այս «Աստուածաշունչ»-ից գտնել անգամ մէկ թերթ։

Հայերէն լեզուով տպագրած Աստուածաշունչի մասին, լայն ուսումնասիրութիւն ունի նաև Յովհաննէս Անասեանը,

իր «Հայկական մատենագիտութիւն» խիստ արժէքաւոր աշխատութեան Բ. հատորի մէջ, ուր ևս խօսք կայ Ջուղայի թերի տպագրութեան մասին. կարծում ենք իր ճիդերն ևս այդ օրինակից որևէ նմոյշ ձեռք բերելու խնդրում, մնացել են անարդիւնք։

3. «Պողոսի բուղրմ», տպագրութիւն Յովհաննէս վարդապետի, Նոր Ջուղա, 1950-ական թուերի *)։

Այս հրատարակութեան մասին յիշատակութիւն ունի ֆրանսիացի յայտնի ուղեգիր Թաւերնիէն, իր «Ճանապարհորդութիւն ի Պարսկաստան» գրքի մէջ (Jean Baptiste Tavernier: «Voyages en Perse» Փարիզ, 1964, էջ 252)։

Նոյն գրքի պարսկերէն թարգմանութեան մէջ, «Աստուածաշունչ»-ը թարգմանել է «Աւետարան» (էնջիլ)։ (գրքտ. Համիդ Շիրանի, Սպահան, 1336 թ. էջ 597)։

Աչատուր աբեղան յիշատակում է որ «բազում» գրքեր տպագրուեցին, բայց թէ որոնք են այդ «բազում» գրքերը, առ այժմ անյայտ է մեզ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆՁՆ ՈՒ ՎԱԽՃԱՆԸ

Անհրաժեշտ ենք գտնում երկու բառով անդրադառնալ նաև մեր այս երախտաւոր վարդապետի անձին ու գործին, ինչպէս և նրա չարաբաստիկ ու արկածաւոր վախճանին, որպէս մէկ կամաւոր զոհի։

Նախքան այդ, տեղին է այստեղ ասենք, որ Յովհաննէս վարդապետի Եւրոպայից բերած մամուլից կամ տպագրական պարագաներից, այժմ մնում են միայն տառերի մայրեր և մի շարք պղնձեայ քլիշէներ։

Այս քլիշէներից 20-ը պատկանել են Գրիգոր Լուսաւորչին համարակալուած Ա-Ի, Սրանցից երկուսը՝ համար Բ.

*) «Հայ հնատիպ գրքի մաս. ցուցակ» համար 1007, էջ 240։

և Ի. 1930-ական թուականներին բերուել են Ս. Յովհաննէս եկեղեցուց և դրուել Թանգարան, համար 208 և 209-ի ներքոյ, որոնց ինչ լինելը անյայտ էր, մինչև որ սրանից մի քանի տարի առաջ, տպարանում տողերս գրողի կողմից կատարուած պրպտումների ընթացքին, երևան եկան 13 նոյնանման քլիշէներ ևս, որոնց ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ պատկանել են Յովհաննէս վարդապետին, և որոնց մաս են կազմում նաև Թանգարանում եղած երկու քլիշէները։

Նկատի ունենալով, որ վանքի Տաճարի Գրիգոր Լուսաւորչին վերաբերող որմանկարները, հարազատ նմանութիւն ունեն այս քլիշէների հետ, ուստի վստահաբար կարելի է ասել, որ դրանք նկարուել են սրանց վրայից։

Ստորև առաջ ենք բերում քլիշէների լրիւ ցանկը, ըստ իրենց վրայ ունեցած հերթական համարների.

Ա. Գրիգոր Լուսաւորչի նկարը (դիմանկար)։
Բ. Ձեռքերը փայտին կապելը. (Թանգարան)։
Գ. . . . . .
Դ. Ոտքերը կոճղի մէջ դնելը.
Ե. Ձերբակալելը.
Զ. Ծեծելը.
Է. Գլուխը ճզմիչի տակ դնելը.
Ը. Գլուխը պարկի մէջ դնելը.
Թ. Արովայնը իւղ լցնելը.
Ժ. Գամերի վրայ քաշ տալը.
ԺԱ. . . . . .
ԺԲ. Ծառից կախելը.
ԺԳ. Գլխին իւղ ածելը.
ԺԴ. Վիրապ գցելը (քլիշէի վերի ու ցածի մասից կտրուած է).
ԺԵ. Տրդատ թագաւորին բժշկելը.

Մեկ նմայշ Յովհաննէս վարդապետի Եւրոպայից բերած 1642 թ-ի քլիշէներից

ԺԶ. Տրպատի և Թագուհու մկրտելը (քրիստոնէութիւնն ընդունելը).

ԺԷ-ԺԹ. . . . . .

Ի. Գրիգոր Լուսաւորչի գահին բազմելը (Թանդարան).

Այս քլիշէները բոլորն էլ մայրեր են, այսինքն հակապարձ տառերով փորագրուած, որ սովորական տպագրութեամբ, գրութիւնը լինում է սպիտակ սև ֆօնի մէջ *). Սրանցից մի քանիսն ունեն թուականներ.

Այս քլիշէների դրեթէ բոլորի առաջին տողի վրայ քանդակուած է.

«ԿԱՐԳ (Ա) Ի ՅԻՇԱՏԱԿ ՅՈՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ ՁՈՒՂԱԵՑԻՈՅ, ՈՐ ՀԱՍԱՐԱԿ ԱՆՈՒԱՄԲ ՔԹՌԷՇԷՆՅ ԱՍԻ Ի ԹԻՒՆ ՌՂԱ (1642)», **)

Այս գրութիւնից յետոյ փորագրուած է տեսալ նկարի ընդարձակ բացատրութիւնը, քլիշէների իւրաքանչիւրի մեծութիւնն է 16·5×23·7 սմ.։

Սոյն քլիշէներից համար ԺԳ-ի ետևի կողմում քանդակուած է.

---

*) Նկատի ունենալով որ քլիշէների ներկայ տպագրական ձևով օգտագործելը, գրերը լինում էին սպիտակ, սև յատակի վրայ· երկար փնտռեցինք դրանց այն օրայ տպագրելու ձևը գտնելու համար· Այս խնդրին մեզ օգնութեան հասան բեռուրաբնակ Տեր եւ Տիկին Ն· եւ Ա· Դարբեանները, որ կարողացան գրերի միջից իմանալ այդ ձևի տպագրութեան մասին եւ յայտնել մեզ· Համաձայն այդ գրութեան, քլիշէները տպագ ում էին յատուկ մկլանով, որը լցնում էին փորագրուած տառերի ու գծանկարների մէջ եւ թիչ խոնաւացրած թղթի վրայ սեղմելով, տպագրում էին սև տառերով, սպիտակ յատակի վրայ·

Այս առթիւ մեր յատուկ շնորհակալութիւնները յարգելի Տեր եւ Տիկին Դարբեաններին·

**) Առաջին այս տողերը գրուած են երկաթագրերով ու կրճատագիր·

«Ասս զՅոհաննես վարդապետս լիենայս զի եւ դու զվարծս ի տ(եառն)նէ զտցես»։

Քլիշէներից պակասում են համար Գ. ԺԱ, ԺԷ, ԺԸ, և ԺԹ-ն։

Մինչև սոյն քլիշէների յայտնաբերելը, մեզ համար անյայտ էր Յովհաննէս վարդապետի ազգանունը։ Երկար փնտռտուքից յետոյ յաջողել էր իմանալ, որ նրա հօր անունը Էղդար է, որի մասին յիշատակած ունի Հրաչեայ Աճառեանը իր «Անձնանունների բառարան»-ի մէջ *) ինչպէս և Զաքարիա Սարկաւագը իր «Պատմութիւն» գրքում, **) ուր ասուած է.

«Այս Յովհաննէս վարդապետս էր ի Նոր Ջուղայու որդի Էղկարին, որ ասի Փրոէտ, որ էր աշակերտ վարդապետին Կնաարացւոյ, որ էր առաջնորդ Ջուղայու»։

Վերոյիշեալ տեղեկութիւններին եկաւ հաստատելու իր 1647 թ-ին տպագրած «Պարզատումար»-ի յշատակարանը, ուր ևս յիշուած է հօր անունը «Ետիկար» և մօր անունը «Անամէլիք»։

Արդ, նկատի ունենալով որ 1666 թ-ին Ամստերդամում, Աստուածաշունչի տպագրութեան ինդրում Ոսկան Երևանցուն երեք օժանդակողներից մէկը կոչւում էր Թէոդորոս Քթրէշենց, որի հօր անունը նոյնպէս Էղկար և մօր անունը Անանամելիք էր, ***), ուստի վստահաբար կարելի

---

*) Հ. Աճառեան «Անձնանունների բառարան», Երևան 1946 թ. Գ. հատ. էջ 695։

**) Զաքարիա սարկաւագ «Պատմութիւն» Վաղարշապատ, 1870 թ. էջ 64։

***) Ոսկան Երևանցի «Աստուածաշունչ» Ամստերդամ, 1666 թ. էջ 833։ Նաև 1Ես «Երկեր» Գ. հատ. Երևան, 1969 թ. էջ 439։ «Սիոն» ամսագիր, Երուսաղէմ, 1966 թ. Փետր.-Մարտ, էջ 157։

է ասել, որ այս Թէոդորոսն եղել է Յովհաննէս վարդապետի եղբայրը, որոնցից մէկը՝ բարերար ու մեկենաս, իսկ միւսը՝ նուիրեալ ծառայ հայ մշակոյթին ու տպագրութեան։

*

* *

Այժմ տեսնենք թէ ինչ վախճան ունեցաւ մեր չարչարեալ Յովհաննէս վարդապետը։

Հակառակ նրա Եւրոպայից մեծ յոյսերով ու կրած անթիւ տառապանքներով Ջուղա հասնելուն, այդտեղ ասպարէզը շատ նեղ եկաւ իրեն, իր սովրած ու սիրած տպագրական աշխատանքներով զբաղուելու համար։ Ուստի նեղացած ու յուսալքուած եղած հակառակութիւններից ու իրեն ցոյց տուած վերաբերմունքից. նոր Ջուղայից հեռանալով գնում է Ս. Էջմիածին, ուր եպիսկոպոսական աստիճան ստանալով նշանակւում է Նախիջեւանի թեմի առաջնորդ։

Այս առթիւ Մաշատուր աբեղայ Ջուղայեցին իր «Պատմութիւն պարսից» գրքում (էջ 119) գրում է.

«Յետ այսորիկ (այսինքն Ջուղայում անյաջողութիւնների հանդիպելուց յետոյ, Լ. Մ.) Յովհաննէս յարգելի վարդապետն երթայ եւ չոգաւ գնաց ի Սուրբ Էջմիածին, ուր եղեւ եպիսկոպոս ի Փիլիպպոս կարուղիկոսէն։ Եւ ապա առաքեցաւ ի հայրապետէն Փիլիպպոսէ ի հին Ջուղայ, առ ի լինել անդ առաջնորդ եւ հովուել զհաւատացեալսն ի Քրիստոս։

Ապա պատմում է թէ ինչպէս ողբերգական վախճան ունեցաւ Յովհաննէս վարդապետը, ըստ որի Ջուղայեցի մի հայ գրամ է պարտք լինում մի տաճիկի, բայց չկարողանալով գրամը ժամանակին վճարել, պարտապանը դալիս տանում է նրա աղջկան և պայման դնում, որ եթէ մինչև

որոշուած օրը չկարողանայ պարտքը վճարել, այլեւս իր աղջկայ իրաւունքը չունենայ։

Հայը ճարահատ դիմում է Յովհաննէս վարդապետին, որ խղճալով նրան, վճարում է դրամը և ազատում դիւղացու աղջկան։ Տաճիկն իմանալով որ վարդապետն է դրամ տուել, մի դիշեր իւրայիններով մտնում է վանք, սպանում է այդտեղ եղողներին և թալանի տալով հեռանում։

Երբ մի քանի օր անցնելուց յետոյ, դիւղացիները նկատում են, որ վարդապետը վանքից դուրս չի գալիս, կարծում են, որ իրենցից վշտացել է, ուստի ուտելիքներով ու նէրներով դնում են վանք և ինչքան բախում են դուռը ոչ ոք բաց չի անում, ելարան են դնում իջնում բակ և տեսնում են որ տեղում եղողները բոլորն էլ սպանուած են, իսկ վանքն էլ թալանի մատնուած։ Այդ ժամանակ միայն հասկանում են կատարուածի մասին, ուստի տեղեկացնում են իշխանութեան և մեծ սուգով թաղում զոհուածներին։

Խաչատուր աբեղան իր դրութեան վերջում, (էջ 120), աւելացնում է, որ այս և այլ մանրամասնութիւնները կարող ես գտնել իր «Լիակատար պատմութեան» մէջ, որից արտահանելով կարճառօտ պատմեցի այստեղ։

Այս «Լիակատար պատմութիւն»-ը ձեռագիր է եղել, թէ տպագիր, ուր կամ որտեղ է այժմ, այս առթիւ որեւէ տեղեկութիւն չի յաջողուել մեզ ձեռք բերել, չնայած որ գրքի մասին յիշել է նաև Լէօն իր «Հայկական տպագրութիւնը» գրքում (Ա. հատոր գլ. է, էջ 224)։

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՃԻԳԵՐ

Յովհաննէս վարդապետի Նոր-Ջուղայից հեռանալուց յետոյ, դադարում են նաև տեղի տպագրական աշխատանքները, որ տևում է մինչև 1687 թիւը։

Վերոյիշեալ թուերին, Ստեփանոս առաջնորդի ժամանակ, խիստ վէճ ու անհամաձայնութիւն է ծագում Զուղայի կաթոլիկ և Հայաստանեաց Առաքելական եկեղեցւոյ հայերի մէջ, որի պատճառով էլ կրկին կարդի է դրւում Յովհաննէս վարդապետի Եւրոպայից բերած մամուլը և տպագրութեան յանձնւում երեք դիրք։

Տպագրած այդ գրքերն են.

1. «Գիրք ասենական որ ասի վիճաբանական» 1687 թ.
2. «Գիրք ժողովածոյ ընդդեմ երկաբնակաց» 1688 թ.
3. «Գիրք համառօս վասն իսկապես ճշմարիտ հաւատոյ» 1688 թ.

Ստորև համառօտ ձևով անդրադառնանք սրանց իւրաքանչիւրին տալով դրանց լրիւ յիշատակարանները, որոնք իրենց մէջ կարևոր տեղեկութիւններ ունեն որոշ խնդիրների լուսաբանման համար։

1. «ԳԻՐՔ ԱՍԵՆԱԿԱՆ ՈՐ ԱՍԻ ՎԻՃԱԲԱՆԱԿԱՆ» 1687 թ. էջ 288։ Ազէքսանդր Զուղայեցի, հրատարակութիւն Ստեփանոս Առաջնորդի։

Դժբախտաբար այս գրքի տպագիր և ոչ մի օրինակը չենք ունեցել ձեռքի տակ։ իր խորագիրն ու վերի տեղեկութիւնները վերցրել ենք «Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ»-ից (Երևան, 1963 թ. էջ 41)։ իսկ անուանաթերթի օրինակը Երուսաղէմի «Ձեռագրացուցակ»-ի Բ. հատորից (ձեռագիր համար 346։ էջ 239)։

«ԳԻՐՔ ԱՍԵՆԱԿԱՆԸ», որ ասի վիճաբանական, ներտպագրացեալ ի տպարանում Սրբոյ Ամենափրկչի Վանացս Նոր Զուղայու։ ի Հայրապետութեան Տն. Եղիազարու յոգնեջանիկ Կաթողիկոսի։ Եւ յառաջնորդութեան յայսմ նահանգին Տն. Ստեփանոսի յայս ածողի տպագրութեանս։ Եւ հրամայողի առնել զգիրս։ Աշխատութեամբ ումեմն

նուասի Տեր Աղեքսանդրի, ի բրականութեանս հայոց Ի՝ ՃԼ. Զ. և յամենայն հոկտեմբերի յառաջնորդում աւուր յուրում սկսաւ տիպ գծիս։

Առ Քրիստոսասէր և ուղղադաւան ժողովուրդս հայկական, Քի. ծառայից նուաստ ծառայ, Աղեքսանդրէ պիտակ անուն վարդապետէ յայտարարութիւն ըստ կիրոյի հակաճառութեան ընդդէմ ազգին Ֆռանկաց»։

Գրքի եկբորդական յիշատակարանը (Ձեռագրի 166. խսկ «Յուցակ»-ի նոյն էջ)։

«Զսակաւ աբխաստոյ սորին և յարմարող գԱղեքսանդր անուամբ, ենք բանի ապաստաւոս լիշել աղաչեմ, ով դասմ ուղափառաց հայկական տոհմի. զի բուոջ հազար հարիւր երեսուն մին ամի։ Եղեւ կատարումն տպագրութեան գրոյս, ի գահս արքայանիստ, և ի գեղաբաղաքս, Ջուղայ, ընդ հովանեաւ Ամենափրկիչ վանացս, ի թին հազար հարիւր երեսուն վեց, իսկ զթին տպոյն է հինգ հարիւր. և Քի. փառք յաւիտեանս, ամէն»։

Գրքի ձեռագիր ընդօրինակութիւններից մեզ յայտնի են երեք հատոր, որոնցից երկուսը գտնուում են Ս. Երուսաղէմի, իսկ մէկը Ջմառոի վանքի դրչագրերի մէջ։

Երուսաղէմի դրչագրերն են՝ համար 346 (Բ. հատոր 1967 թ. էջ 239) (Ն. եպսկ. Պողարեան «Մայր ցուցակ Ս. Յակոբեանց» Երուսաղէմ) և համ. 992 (Գ. հատոր, 1968 թ. էջ 593)։

Ջմառոի վանքի դրչագիր համար 273 (Մեսրոպ վրդ. Քէշիշեան «Ցուցակ Հայերէն ձեռագրաց Ջմառոի վանքի Մատենադարանին» 1964 թ. Վիեննա, էջ 622)։ Այստեղ ձեռագրի խորագիրը կրում է «Ստեփանոսի Դաշտեցւոյ պատասխանատրութիւնք ընդդէմ գրքոյն մրքուց Յովհաննէս վ-ի» միւսները ևս թէև ունեն տարբեր խորագրեր, բայց յիշած են նաև այս գրքի մասին։

2. «ԳԻՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՅ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲՆԱԿԱՑ»,

1688 թ. Ալէքսանդր Ջուղայեցի, հրատ. Ստեփանոս Առաջնորդի, էջ 764, չարաչափ 11 × 7. 5 սմ։

ԳՐՔԻ ԱՆՎԱՆԱԹԵՐԹԸ.

«*ԳԻՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՅ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲԱՆԱԿԱՅ*, մանաւանդ աշխարհաւոր ժողովոյն քաղկեդոնի, արարեալ սրբազանից վարդապետաց »։

էջ 3 - 4 - ում գրքի նախաբանն է, որ սկսւում է այսպէս.

«Մեծահանդէս հակաճառութիւն փառաւոր ··· »։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

1. Արդ զմի է (7) գրոցս եղև վերջ. ի տպարանում Իսպահանու Ջուղայ և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն »։ *) (էջ 272)։

2. «Կատարեցաւ հինգերորդ գիրքս Իսպահան. ի գեղաբաղաքս Ջուղա. ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկիչ վանացս. ծնողաբար և հոգաբարձութեամբ Տեառն Ստեփաննոսի նորին առաջնորդի. և արքեպիսկոպոսի. և աստուածաբան վարդապետի։

Աշխատութեամբ սրբազրողի առին Տէր Աղէքսանդրի. եղբայր մասն բարեաց ի Քրիստոսէ. Աստուծոյ մերոյ որ է. օրհնեալ յաւիտեանս ամէն։ Տէր »(էջ 479)։

3. «Կատարեցաւ վեցերորդ գիրք արքոյն Գրիգորի Տաթեւացոյն։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս Ամէն » (էջ 660)։

4. «Շնորհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կամօք և կարողութեամբ հոր և Սրբոյ Հոգւոյն. աւարտեցաւ գիրս հակաճառական որ ընդդէմ պիղծ ժողովոյն Քաղ-

---

*) Այս, ինչպէս և յաջորդ գրքի յիշատակարանների համառօտագրութիւնները բացուած են, իսկ փոքրատառով գրուած յատուկ անունները դարձուած մեծատառ։

կեղոնի. եւ ամբարեցին Լեւոնի եւ Փլաբիանոսի հնեւոլացն Նեսորի. յամի թուականութեան տեմիս հայկական ՌԾԼԷ (1688). ի Հայրապետութեան Տեառն Եղիազարու Կաթուղիկոսի ամենայն հայոց, եւ յառաջնորդութեան յայսմ նահանգի քաջ ախոյեանին ուղղափառութեան Տեառն Ստեփաննոսի արքեպիսկոպոսի եւ աստուածաբան վարդապետի, Որոյ հրամանաւ եւ օժանդակութեամբ հաստատեցաւ տպագրատունս, ի վանս վանմական եւ փառաբնակ Ամենափրկչի Նոր Ջուղայու, յամսեանն Մայիսի Ի. եւ Ա. (21). Ընդ նմին եւ արքայորդ սորին. զՏէր Աղեքսանդր յիշել աղաչեմ, Այլ եւ վերակացու տպագրատանս. զՏէր Անդրեաս կուսակրօն քահանայ, եւ զերիցուսն գործավարք սորին, զՏ.էր Սարգիս. եւ զերկնակ Տէր Աստուածատուրն. եւ զՄանուկ դպիր» (էջ 760-761).

Գրքի բոլոր եօթը գլուխներն (գրքերն) ևս ունեն իրենց համապատասխան վերնագրերը, որոնցից երկուսը՝ չորրորդն ու վեցերորդը, որպէս նմոյշ բերում ենք ստորև։

ա. «Երանելոյն Պողոսի սուրբ վարդապետի հայոց, իմաստասիրի Տարօնոյ ասացեալ ընդդեմ ժողովոյն Քաղկեդոնի» (էջ 376).

բ. «Հարցմունք առ երկարնակս որ ուրանան զմին Քրիստոս Աստուած մարդացեալ ասել։ Այլ բաժանմամբ կատարեալ Աստուած եւ կատարեալ մարդ» (էջ 181).

3. *ԳԻՐՔ ՀԱՄԱՌՕՏ ՎԱՍՆ ԻՍԿԱՊԷՍ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՒԱՏՍՈՅ»։ Հեղինակ Յովհաննէս վրդ. Ջուղայեցի (Մրբոգ), հրատարակութիւն Ստեփանոս Առաջնորդի, 1688 թ. էջ՝ 380 (16 չհ. + 364), չափսաձք՝ 8.3 × 5.3 սմ.։*

Գիրքն ունի երկու անուանաթերթ որոնք են.

ա. «*ԳԻՐՔ ՀԱՄԱՌՕՏ ՎԱՍՆ ԻՍԿԱՊԷՍ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՒԱՏՍՈՅ* եւ դաւանութեան ուղղափառ կաթուղիկէ. ընդհա-

նուր հայաստանեաց եկեղեցոյ, զոր առաք ես ունիմ այժմ ի Գրիգորն սուրբ Լուսաւորչէն, և երից սուրբ ժողովոցն և արքոց հոգիբնկալ երկոտասան վարդապետացն նոս վասն բնդդիմութեան երկարնակաց, որ հետին քան մատաղածին բանից իւրեանց և ոչ քան առանդութեան արքոց հոգիբնկալ հարցն, զոր ասացեալ ուսան ի հաղկեղոնական ժողովոյն, և ի տումարէն Լեւոնի, որ յայտնի բնդդեմ է երից սուրբ ժողովոցն և աստուածբնկալ սուրբ հարցն։

Եղեւ տպագրութիւնս ի բազաւորութեան արքայից արքայ Շահ Սուլէմանն բազաւորին, ի Հայրապետութեան Տեառն Եղիազարու Կաթուղիկոսի ամենայն հայոց ի Զուղայ ի Վանս Սուրբ Ամենափրկիչ ծնեալ նորին առաջնորդի Ստեփաննոսի Երեի եպիսկոպոսի, ի թեալանքարարութեան պալազաս պարոն Եւեսին, Աբեսաղոմ տպարանութեամբս զՄարգիս և զԱստուածատուր իրիցուն նոս յիշել ապաչեմ։»

Բ. «ԴԱՒԱՆԱՒԹԻՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՆԵՐԱԾԱՒԹԻՆ ԱՆՈՒՂՂԻՑ»։ SMBOLUM ARMENIORUM ET INTRODUCTIO DE DI DIRECTAM:

Ի թուոյ Փրկչին Ա Զ Ձ Զ Ը (1688) և քան հայոց Ա Ճ Լ. և Զ (1687)։ Ցկնեա Հոգի Սուրբ Աստուած և հաս ի թիկունս տկարութեանս մերոյ։»

Այն անուանաթերթի գրութիւնը կայ գրքի բոլոր տասը գլուխների սկիզբներում, իսկ միայն առաջինում՝ լատիներէնից յետոյ եղած թուականն ու գրութիւնը։

Գրքի սկզբում ունի նախաբան «ՊԱՏՃԱՌ ԵՒ ՆԱԽԵՐԳԱՆՔ ԳՐՈՑՍ» խորագրով, որը իր բովանդակութեամբ խիստ հետաքրքրական լինելով քերում ենք ամբողջութեամբ.

«Վանմախոնից անձանց և նեմարտապրաց ոգոց,

ի Քրիստոս Աստուած հաւատացելոց, լուսաւորչածնելոց, մանկանց սուրբ կաթուղիկէ եկեղեցոյ Հայաստանեաց ուղղափառաց բարեբասից, նուաստ յումեմն Ստեփաննոսէ բանի պատսօնեէ, եւ վերադիտողէ մասին հայոց որ ի կողմանս պարսից,

Գիտութիւն լիցի ձեզ սիրելեացդ, զի զպատճառ տպագրութեանս մեր է այս, հետազօս եղաւ ներկայիս զի յոլովք զիրք զոյր անյայտ յումեքէ ի մերայնոց նախնեաց սրբոց վարդապետաց, մանաւանդ պիտանիք հարկաւորք եւ լուսաւորք, եւ թէ ուրեք առ այս· եւ այն գտանի· զի՝ նչ տահ եւ օգուտ հասարակին, վասն որոյ ապաւինեալ ի յոյսն ամենից սուրբ հոգին· սկսաք ի լոյս ածել զտպագրատունս· առ ի տպել զվաղեմի սուրբ գրեանքս, զոր յետ սուղ ժամանակի տպեալ առաքելոց եմք առ ձեզ, այլ ներկայիս եւ թուղթք որ եւ գիրք եւս· վասն ընդդիմութեան երկաբնակաց, թէ ո՞ եւ ո՞վ որ, աշխատասիրութեամբ ճնշեալ տքնութեամբ ժողովեալ եւ մեկնեալ հգովն սրբով աստուածատունչ գրոց,

Նախ զՄաթոսաղայի Սիւնեաց եպիսկոպոսի թուղթն որ առ կայսրն Հերակլ գրեաց, Երկրորդ· Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի թուղթն որ առ գերմանոս պատրիարգն Կոստանդնուպոլսի գրեաց,

Երրորդ միւս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկրպոսի որդոյ Տարսաիճ իշխանի որ առ Գրիգոր Կարողիկոսն գրեաց, Չորրորդ Պօղոսի Տարօնացոյն, որ առ Թէոփեստ գրեաց, Հինգերորդ Վարդանայ Մեծին հռետորի ընդդիմութիւն, որ առ հասարակ երկաբնակսն գրեաց, ի սուրբ գրոց աստուածաբանից, Վեցերորդ Հբ (72) բանք Միխայէլի վասն ժողովոյն Քաղկեդոնի գրեաց որ եւ ինքն ազգաւ ասորի, վարդապետ եւ պատրիարգ նմին ազգի,

Արդ որովհետեւ ոչ զոյր յազգին մերոյ տպագրատունք թէ տպեալ յոլովեցուցեալ սփռեալ էին ի տունս հայոց·

եւ ձեռագրով հոգիս այսպէս եւ այսքան լինի որպէս տնանկէիդ, եւ լոկ տալ տպել յիրկիրն Յոհանկաց. անմարդ է եւ անկար. Զի մերս գիրք ինքեանց գրոցն է. նիրհակ վասն որոյ ոչ կարին. եւ ոչ բոյլ տան առ ի բազմանալ մերոյնց արդոց վարդապետաց գրեցելոցն. Այժմ որովհետեւ պատրաստեալ եղեւ ի միջի մերում գործարան տպագրութեանն այսուհետեւ անեան եւ անկասկած տպելոց եմք զամենայն զգրեանս արդոց վարդապետաց որ առ մեզ գոյ. Բայց այժմ զկրկնակի փոքր գրեանսն որ եւ գրաւ եւ կատարումն իսկ եղեւ. հինգ հինգ հարիւրով, սիոնցաք առ ամենայն լուսաւորչածնունդն եւ ուղղափառ հաւատակ հայոց. զի են սոքա փոքր գործ գործարանին եւ գրչութեան. իբր առնուաստչեա ի իրախութիւն քրիստոսասիրացդ. Բանզի պատշաճ տեսեալ մեր նիրհալիս զանս. հարկեալ ի վերայ սիրելի եւ հարազատ եղբարց Յոհաննէս եւ Եղէազարայ վարդապետացս. որ եւ իսկոյն բարց տարակուսի հոգացեալ, առաք եւ տպեցաք զհայեցեալին մեր. որոց Քրիստոս լիցի վարձահատոյց. Զկնի որոյ զմեծամեծսն եւ կատարեալսն եմք տպելոց. Բարեխօսութեամբ եւ անդադարեալի հայցուածովք բազմաչարչար նահատակին Քրիստոսի եւ բազմերախտի Գրիգորի Լուսաւորչին եւ հոգեկիր սուրբ հարցն եւ ձերովք աղօթիւք. Եղեւ սկիզբն եւ կատարումն սորին ի վանս սուրբ Ամենափրկչի Նոր Ջուղայու. ձեռամբ եւ հոգաբարձութեամբ Տեառն Ստեփաննոսի նորին այցելուի ի փառս Քրիստոսի Աստուծոյ. որ է օրհնեալ յաւիտեանս ամէն»

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ.

ա. «Զտէր Անդրեաս կրօնաւորս նս լիեալ աղաչեմ» (էջ 141).

բ. «Այս քանս բարեկամացի իմասայնոց հանճարեղագունիցն, զոր արարաւ եւ յօրինեցաւ ի ձեռն ամենաբարեաւ անձին Յոհաննէս վարդապետին Խարբերդ-

ցոյ ի փառս ամենասուրբ երրորդութեան որ է օրհնեալ յաւիտեանս ամէն» (էջ 361)։

գ. «Այլ եւ խնդրեմ ի ձեզ յիշել Քրիստոս զարքոյ մենաստանի աստ գումարեցելոց յուսուցչապետ հոգիքնկալ հօր մերոյ Տեառն Դաւիթ վարդապետի, որ միշտ ի սպասու կաց եւ կատարեն զպաշտօն արքոյ եկեղեցոյս, որ եւ Լամակցութեամբ միմեանց ջան եղեալ եւ գուն գործեալ ի վերայ գործարանի տպագրութեանս այսինքն, զՄիքայէլ վարդապետն, զՅոհաննէս վարդապետն զշարադրող գրոյս, զԱղէքսանդր միջատարոզ վարդապետն, զԵսայի վարդապետն, զԱհարոն վարդապետն, զհոգեբարձու վանաց եւ տպագրութեանս զՏէր Անդրէասն, զՏէր Թովմասն, զՏէր Յոհաննն։

Եւ այլ գործակալք տպագրութեանս եւ միջնաբոյսք զՏէր Սարգիսն եւ զՏէր Աստուածատուրն ի արքոյ Յակոբայ, մանդասի Նուսանեղ դպրապետն. զաւագ սարկաւագունսն, զԱբրն, զՍիմէոնն, զՄիքայէլն, զՆերսեհանն, զՅոհաննէսն, զԱստուածատուրն, Դաւիթն, Յոհաննէսն, Տէրոնն, Թորոսն, Եպիսկոպոսն, Պետրոսն, զՅոհաննն, զԱնդոնն, զՀայրապետն, զԱլավերդեանն, զՅարութիւնն, զՍտեփանոսն, եւ զՄանուկ գիր բաթեղն, եւ զՍտեփանոսն, զՊետրոսն, Մելիքարէն, որ այժմ կան ի վերայ իրաքանչիւր գործոց, զոր Աստուած զամենեսեան վարձատրեսցէ. Ամէն։

Հայր մեր որ յերկինս։
Յիշեցիք եւ դուք որ ի վերսաց» (էջ 362-364)։ *)

Հակառակ սոյն գրքի նախաբանում եղած այն մտա-

---

*) Վերջին երկու գրքերի յիշատակարանները, անհրաժեշտ բացատրութեամբ եւ հարազատ բնագրերնամբ խմբագիր Արա Դալալեանի կողմից բերուած են «Արոն» ամսագրում, (Երուսաղէմ 1967 թ. Սեպտ.-Հոկտ. էջ 446-448)։

դրութեան, թէ այսուհետ այլ գրքեր ևս պէտք է տպագրուեն և ցրուեն հայ ընտանիքներից ներս, մամուլը կրկին մատնըւում է անգործութեան և այս անգամ դրեթէ ընդմիշտ։ Վանքի տպարանում սոյն մամուլից այժմ չի գտնուում անգամ որևէ մի մաս, դրանք ժամանակի ընթացքում բոլորն էլ կորել ու անհետացել են։

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՄԱՄՈՒԼՆԵՐ

Վանքի տպարանը շուրջ երկու դար (184 տարի) փակ մնալուց յետոյ, աշխատել է սկսում 1872 թուականից, սրանից ճիշտ հարիւր տարի առաջ։ *)

Տպարանի այս մամուլը, որ երրորդը կարելի է համարել, նուիրել է Ջուղայեցի վաճառական Ջաւաբնակ Մանուկ Յորդանանեանի (աղջկանց դպրոցի հիմնադրի) կողմից։

Համաձայն մինչև այժմ տիրող կարծիքին և տպարանի առթիւ տպագրուած առանձին գրքի տուած տեղեկութեան, մամուլը նէր է ուղարկուել 1844 թուին, բայց ըստ «Ազդասէր» ամսագրի հաղորդած մի լուրի, մամուլը Ջուղա է ուղարկուել 1846 թուին, որի փոխադրութեան սիալ կարգադրման հետեւանքով, կազմածի մի մասը նախ դնացել է Հնդկաստան։

Այս առթիւ այսպէս է գրում «Ազդասէր»-ը. **)

«Տպարանին պարգեւելոյ ի պարոն Մանուկէ Յոր-

---

*) Այս տարի զուգադիպում է նաեւ էջմիածնում Տպարան հաստատելու եւ առաջին գրքի տպագրութեան 200 ամեակին, որի առթիւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Վեհափառի կողմից գրուել է յատուկ կոնդակ եւ 1972 թիւը յայտարարուել յոբելենական տարի։

**) «Ազդասէր» ամսագրի, Կալկաթա, 1847 թ. Յունուարի 23։ Նաեւ Տէր Սեդրեսեանի «Համառոտ պատմութիւն հայոց» Ն. Ջուղա, 1877 թ. էջ 133։



Մանուկ Յորդանանեանի նվիրած 1846 թվի «Արծիվ» մամուլը

պանանեան Նոր Ջուղայեցոյ Ամենափրկչեան մայրավանից Նոր Ջուղայ՝ ի Գերմանիոյ հասնալ ի Բուշեռ՝ մասնաստեղծաւ ի կոտրուս կէս մի ի Ջուղա՝ գնաց, եւ կէս մի՝ կամ իսարիսին՝ վերադարձաւ այսր՝ Զամբիոն նաւով, երկոքումբ եւս անպիտացեալք ի պատճառս՝ որպէս ասի, անտանելի ծանրութեան իւրոյ՝ բնդ որ չգիտիմք զարմանա՞լ արդեօք թէ ամաչել եւ ողբալ .... »։

*Տէր Սեղբեստրոսն իր «Համառոտ պատմութիւն հայոց» գրքում (էջ 132), տպագրական մամուլի թուականը դնում է 1843, իսկ Տիգրան Աբգարեանը իր գրքում *) (էջ 8), գրում է 1844 թ.։*

Համաձայն «Ազդասէր»-ի հաղորդած տեղեկութեան մեզ թւում է, որ մամուլի լրիւ կազմածը հազիւ թէ 1848-49 թուերին Ջուղա հասած և ամբողջացած լինի, բայց այդ ժամանակ ևս դրան միացնող չլինելով, երկար ժամանակ մնում է վանքի մի անկիւնում ընկած։

Որա տառերը նոր ընծայ Տէր Գիոնիսիոս Տէր Եղիազարեանը ի մի հաւաքելով, մի փոքր ճնշիչ մամուլով տպագրում է 1863 թուի գրպանի մի օրացոյց։

*Վանքի այս մամուլը մնում է անգործածելի մինչև 1872 թիւը **) երբ շնորհիւ առաջնորդ Գրիգորիս արքեպիս. Յովհաննիսեանի ջանքերի, գործի է դրւում և սկըսում է աշխատել, որի օգտագործումը տևում է մինչև 20-րդ դարի սկիզբները, որից յետոյ որպէս մաշած ու հնացած դրւում է պահեստ։*

Նոր թանգարանի կառուցումից յետոյ, այժմ այն դրւել է ցուցապրութեան, արձանագրւած է 348 համարի ներքոյ։ Պատրաստւած է 1811 թ. և կոչում է «Արծիւ»։

---

*) Տիգրան Աբգարեան «Նոր Ջուղայի Ամենափրկչեան Ս. Վանքի տպարանը 1640-1912» Ն. Ջ. 1912 (էջ 8)։

** Տ. Աբգարեանը գրում է 1877 թիւ (Նոյն էջ 9)։

Նախքան այս մամուլի աշխատելը, ըստ Տիգրան Աբղարեանի տված տեղեկութեան «Ն. Զ. տպարանը» էջ 8), վիմատիպ մամուլով տպագրել են դասագրքեր և այլ աշխատութիւններ, որոնցից դժբախտաբար մինչև այժմ որևէ օրինակ չենք ունեցել ձեռքի տակ։ *)

1904 թուականը դալիս է նոր թափ տալու Զուղայի տպագրական գործին։ Սոյն թիւն բապտիստական Թումանեան եղբայրների Առևտրական Տունը, իրենց հանդուցեալ եղբօր՝ Յովսէփ Թումանեանի յիշատակին, վանքի տպարանին է նուիրում, այն օրերի հասկացողութեամբ մի արագատիպ արդիական մամուլ, իր բոլոր յարմարութիւններով, որն սկսում է աշխատել եռանդուն ձևով, շնորհիւ բարեկարգիչ ու բարեջան առաջնորդ Բաղրատ վրդ. Վարդապետեանի։

Այդ օրերի մեծ ու փոքր բազմաթիւ տպագրութիւնների հետ յիշատակութեան արժանի է նաև «Նոր Զուղայի Լրաբեր» երկշաբաթաթերթը, որը իր ուղղութեամբ ու ազգային ոգով, յատուկ տեղ ունի Զուղայի մշակութային աշխատանքների մէջ։

Թումանեանների նուիրած մամուլը աշխատում է այժմ ևս, միայն թէ մինչև վերջին տարիները բանում էր ձեռքով պտտող անիւով, իսկ այժմ գործում է էլեկտրականութեամբ աշխատող մի շարժակով։ Թէև դա հեռու է արդիական մի մամուլ լինելուց, բայց և մի միջոց է տպագրութիւնը մասամբ արագ կատարելու համար։

1971 թ-ի Հոկտեմբեր ամսին, տիկ. Վիկտորիա Շահբազեանը, մի այրիացեալ ու վաստակեալ ուսուցչուհի, ընկառաջ գնալով Թեմական Առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին

---

*) Վիմատիպի մի օրինակն է 1924 թին տպագրուած «Դպրաց հրգնցողութիւնք Ս. Պատարագի» գիրքը։



1904 թ-ի մամուլը

Տպարանի դրաշարանոցը

Սրբազանի կոչին, իր միակ որդու՝ Էմիլի յիշատակին, տպարանին նուիրեց գերմանական «Հայդելբերգ» գործարանի մի ինքնաշխատ արդիական մամուլ, որը թէև իր տպագրական չափով փոքր, բայց իր արագ ընթացքով՝ ժամական մինչև 5500 օրինակ, հնարաւորութիւն է տալիս շատ արագ աշխատանքներ կատարելու։

Ի լրացում այս մամուլին, տիկ. Շահրազեանի եղբօր՝ պրն. Սարգիս Մարտինի կողմից ևս նուիրուեց մի կայծի ոյժով աշխատող չեխոսլովակեան «Մաքսիմա» անունով արդիական մի կտրիչ մեքենայ, որն ևս եկաւ փոխարինելու ձեռքով աշխատող նախկին կտրիչին։

Մինչև մի երկու տասնեակ տարի առաջ, տպարանի վերահսկութեան աշխատանքները սովրաբար կատարում էին վանքի միաբաններն ու թեմական իշխանութեան կողմից նշանակուած անձնաւորութիւններ, իսկ վերջին տարիներում դրա հետ աւելացաւ նաև պետական պաշտօնական արտօնագիրը։ Տպարանի պաշտօնական իրաւունքի առաջին արտօնագիրն ստացուեց Վաղարշակ Տէր Սուքիասեանի անունով, որից յետոյ այդ պաշտօնը յանձնուեց Մկրտիչ Հայկունեանին, որը վարում էր մինչև վերջերս։ Ներկայիս վերահսկողութեան աշխատանքն յանձնուած է տողերս գրողին։

Տպարանում այժմ աշխատում են երեք հոգի՝ Մկրտիչ Հայրապետեան, Աբրահամ Շահիջանեան և Ղազար Սահակեան, որոնք օրն ի բուն շարում, էջերը կապում, տպագրում և կտրում են փոքր ու մեծ զանազան տպագրութիւնները։

*

* *

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի տպարանը, իր շուրջ երեք և կէս դարեայ աշխատանքով, մեծ ծառա-

յութիւն է մատուցել պարսկահայութեան, յատկապէս այն օրերում, երբ դեռևս Իրանի միւս հայկական գաղութները զուրկ էին տպարաններից։ *)

Քսաներորդ դարի երկրորդ քառորդում, արդէն կանոնաւոր ձեւով սկսեցին աշխատել իրանահայ այլ տպարաններ։ Այդ տպարաններից ոմանք, յատկապէս Թեհրանի «Փարոս», «Մոդերն», «Ալիֆ» և այլ փոքր ու մեծ հայկական տպարանները, իրենց աշխատանքներով շուքի մէջ թողեցին միւս շրջանների, որոնց թւում և ժամանակին մեծ ծառայութիւն մատուցած Թաւրիզի Թեմական Տպարանին։

Ներկայիս Թեհրանում աշխատում են մեզ ծանօթ հետևեալ հայկական տպարանները։ *)

1. «Մոդերն» հիմնուած 1923 թ
2. «Ալիֆ» » 1951 թ.
3. «Նուրբախշ» » 1955 թ.
4. «Արաքս» 1955 թ.
5. «Անի» » 1956 թ.
6. «Նայիրի» » 1959 թ.

Վստահաբար պէտք է ասել, որ մի օր կգրուի է իրանահայ բոլոր տպարանների պատմութիւնը. որոնց մէջ իր

---

*) Այստեղ միջանկեալ յիշենք, որ պարսկական առաջին տպարանը հիմնուել է Թաւրիզում 1817 թին, ապա 1824 թին փոխադրուել է Թեհրան։

Պարսկական առաջին թերթը լոյս է տեսել 1837 թին, տպագրուել է մէկ էջի վրայ եւ յատուկ անուն չի ունեցել։

*) Այս տպարաններից ոմանց տեղեկութիւնները ստացել ենք «Մոդերն» տպարանի տէր եւ տնօրէն պրն. Տաճատ Պողոսեանից, որին յայտնում ենք մեր շնորհակալութիւնները։



Նոր նիւրած մամուլը
Աջ կողմում՝ Գերշ. Գարեգին Սրբազան,
կողքին՝ Նուիրատու Տիկ. Շահբազեան։

առանձին տեղն է ունենալու Նոր Զուղայի ամենահին տպարանը, իր վերազտած ու աշխուժացած ներկայի նոր թափով։

Յաւէտ փառք հայ ժողովրդի ստեղծագործ ուժին և բիւր օրհնանք նրա ժիր ու արի զաւակներին։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ
ՏՊԱԳՐՈՒԱԾ ԳՐՔԵՐԻ ՎՐԱՅ

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի տպարանից, 335 տարիների ընթացքում, լույս են տեսել 372 հատոր գիրք ու գրքույկներ, որոնց կարելի է բաժանել վեց մասի, ըստ հետևեալ ցանկի.

1. Գիրք ու գրքույկներ.
2. Օրացույցներ.
3. Տեղեկագրեր.
4. Կանոնագրություններ.
5. Պարբերականներ.
6. Զանազան.

1. Գիրք ու գրքույկներ.— *Գիրք ասելով հասկանում ենք 705 էջից բաղկացած «Հարանց Վարք»-ը և նրա հետ նաև 8 էջից բաղկացած «Աստուածաշունչ մատեան»-ը կամ աւելի փոքր՝ 4 էջից բաղկացած մի կանոնագրութիւն։*

Այս գրքերի ու գրքույկներից ոմանք ունեն շապիկների տպագրութեան յարմար դասաւորումներ և սկսեալ 1890-ական թուերից մինչև 1940-ական թուերը, վաճառուել են վանքում և Ազգային Դպրոցներին պատկանող գրավաճառանոցում։

2. Օրացույցներ.— *Նոր Ջուղայի առաջին օրացոյցը լոյս է տեսել 1863 թուի համար և վստահաբար տպագրուել է 1862 թուին, նոր ընծայ Տէր Դիոնիսիոս Տէր Եղիազա-*

րեանի ձեռքով։ Ապա սկսեալ 1878 թուից, յաջորդաբար լոյս են տեսել վանքի օրացոյցները, որոնք երբեմն իրենց մէջ պարունակել են նաև շնչագրութիւններ, վիճակագրութիւններ, և հետաքրքիր այլ տեղեկութիւններ՝ խրատներ, դիտելիքներ և այլն։

Օրացոյցների յաջորդական շարքը ընդհատուել է երկու անգամ, առաջինը 1893—1897 թուերին, հինգ տարով և մեզ անյայտ պատճառներով, *) իսկ եկրորդը՝ 1939—1944 թուերին՝ 6 տարի, երկրում տիրող աննպաստ պայմանների հետեւանքով։

Մինչև սոյն՝ 1972 թիւը, օրացոյցների ընդհանուր քանակը հասնում է 84 համարի։

Օրացոյցների մասին աւելի մանրամասն կարելի է տեսնել «Ալիք ամսագիր»-ի մէջ, տոդերս գրողի յոդուածը, օրացոյցի տպագրութեան 100 ամեակի առթիւ (Թեհրան 1963 թ. Փետր. էջ 71)։

3. Տեղեկագրեր. — Վանքի տպարանում թէև բազմազան տեղեկագրեր են տպագրուել, բայց յաջորդաբար տպագրուած ազգային հաստատութեանց տեղեկագրերի թիւը երեք է, որոնք ըստ թուական հերթականութեան հետեւեալներն են.

ա. Բատաւիայի ազգային հաստատութեանց «Տարեւոր Տեղեկագիր»-երը, որ սկսւում է 1880 թուից և դադարում 1930 թուին։ Արանցից 1888 - 1891-ի համարները՝ 4 տարի, լոյս են տեսել Կոստանդնապոլսում, իսկ միւս համարներից ձեռքի տակ չենք ունեցել 1885, 1887 և 1892 թուերինը, նաև տեղեակ չենք թէ 1926—29 թուերին տպագրուել են թէ ոչ, կամ եթէ այո որտեղ։ Այս մասին

---

*) Ընդհատման տեղեկութիւնը ձեռքիս է բերել օրացոյցների յաջորդականութեան ճարտար ստուգման նիրարկելու միջոցով, ապա նկատելով որ հերթականութեան համարը չի պահւում, սկսեալ 1960 թուից, մեր առաջարկով, կրկին ճարտուկեց։

մեր բոլոր ջանքերն ու պրպտումներն անցան ապարդիւն։

Մեր ձեռքի տակ չունեցած երեք օրինակից բացի, միւսների թիւը հասնում է 39 հատորի։

բ. Նոր Ջուղայի ազգային հաստատութիւնների «Տարեկան հաշիւ»-ներ, տպագրւել են սկսել 1893 թւից և յաջորդաբար շարունակւել են մինչեւ 1926 թիւը, որոնք հաշւական տեղեկութիւնների հետ միասին, իրենց մէջ պարունակում են նաև պատմական որոշ թւականներ և այլ կարդի կարևոր տեղեկութիւններ։

Հրատարակւել է 33 թիւ, որոնք բոլորն էլ, բացի մէկ-երկուսը, ունեցել ենք ձեռքի տակ։

դ. «Ազգային դպրոցների տեղեկագրեր»։— Սկսւել է հրատարակւել 1899 թւից և շարունակւել է մինչև 1917 թիւը։ Ձեռքի տակ չենք ունեցել 1901-1904 և 1908-1910 թւերի համարները և քանի որ հերթական համարներ ևս չունեն, ուստի վստահ չենք թէ այդ տարիներին տպագրւել են թէ ոչ։ Ձեռքի տակ ունեցածների թիւը հասնում է 11 համարի։

Այս տեղեկագրերը, որոնց խորագրերն երբեմն են թարկւել են փոփոխութեան, պարունակում են խիստ հետաքրքիր տեղեկութիւններ, մեր դպրոցների այն օրերի վիճակի մասին, որոնք կարևոր նիւթեր են դպրոցական ապագայ պատմաբանների ու բանասէրների համար։

գ. Կանոնագրութիւններ։ — Տպարանի շատ լոյս ընծայած գրքերից մէկն էլ կանոնագրութիւններն ու ծրագիր — կանոնագրերն են, որոնք պատկանում են ազգային դպրոցներին, թեմական ու կրօնական խորհուրդներին և զանազան միութիւնների։

Սոյն գրքոյկները սովորաբար ունեն շատ փոքր ծաւալ։ Դրանցից մի քանիսը բաղկացած են հազիւ չորս էջից։ Ընդհանուր թիւը հասնում է շուրջ 30-ի։

Ե. Պարբերականներ. — Վանքի տպարանում տպագրված առաջին պարբերականը «Նոր Ջուղայի լրաբեր»-ն է, որ լույս է տեսել 1904-1908 թվերին, խմբագրությամբ առաջնորդական տեղապահ Բագրատ վրդ. Վարդապետյանի։

Բագրատ վարդապետն իր գործունեությամբ և տարած ազգօգուտ աշխատանքներով, համարվում է Նոր-Ջուղայի երկրորդ Մաշտոց Կեսարացին և իրավամբ արժանի է այդ կոչմանը։

«Նոր-Ջուղայի լրաբեր»-ից լույս է տեսել 45 համար միայն, որի մանրամասն ցանկը տրվելու է իր տեղում։

«Լրաբեր»-ից բացի, այստեղ տպագրվել է նաև Նոր-Ջուղայի «Բոյ սկաուտ» Միությանն «Ընկեր ամսագիր»-ը, 1920 թվին, որից լույս է տեսել միայն երեք թիվ։ Ջուղայում տպագրվել են նաև վիմատիպ ամսագրեր։

Զ. Զանազան տպագրություններ. — բացի սովորական գիրք ու գրքույկներից, տպագրվել են նաև զանազան ձևի ծանուցումներ, յայտարարություններ, կոնդակներ, կրոնական բովանդակությամբ գրություններ, ազդեր, ստացագրեր, հաշվեգրեր, հրավիրագրեր, շնորհավորագրեր, այցեկարտեր և այլն և այլն, որոնց նմոյշները թվական հերթականությամբ և առանձին ցուցակով, պահվում են տպարանի արխիվներում։

Այս այլազան տպագրությունների մեջ, յատուկ յիշատակության արժանի են 1693 թվին տպագրված երկու «Կոնդակ»-ներ, որոնք բողոք-նամակներ են կաթողիկոսական ընտրության առթիվ։

Կոնդակների մասին ավելի մանրամասն գրվել է «Հասկ» ամսագրում։ *)

---

*) «Հասկ» պատմական ամսագիր կաթողիկոսարանաց Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ։ (Բեյրութ, 1970 թ. Սեպտ.-Հոկտ. էջ 380)։

ՏՊԱՔԱՆԱԿ ԱՐԺԷՔ, ԼԵԶՈՒ ԵՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թէև դժուար է սպառիչ ձեւով խօսել կամ տեղեկութիւններ տալ, մինչև այժմ վանքի տպարանում լոյս տեսած բոլոր գրքերի տպաքանակների, արժէքների, լեզուի ու բովանդակութեան մասին, բայց այդուհանդերձ անհրաժեշտ է դէթ խիստ համառօտ ձեւով անդրադառնալ դրանց և որոշ ծանօթութիւններ տալ։

Ստորև մի քանի նշումներ դրանց մասին.

1. Տպաքանակ. — Տպագրուած գրքերի այլազանութեան նման դրանց տպաքանակն (թիրաժն) ևս եղել է շատ տարբեր։

Թէև մեր ձեռքի տակ չենք ունեցել բոլոր գրքերի տպաքանակը, բայց եղածների մէջ ևս նկատելի է անհամեմատելի տարբերութիւններ։

Մեծածաւալ գրքերի մէջ եղած ամենաշատ տպաքանակ ունեցողը, կարելի է 1895 թւին հրատարակուած «Ուսգ Շարար»-ը համարել, որն ունի 621 էջ և տպագրել է 3158 օրինակով։

Այս գիրքն ունի բարդ տպագրութիւն (ձայնանիշների և տառատեսակների տեսակէտից), վերջին տարիներում Երուսաղէմից և այլ վայրերից խիստ պահանջկար ու մինչև այժմ էլ դեռ չի սպառուել։

Նոյնանման գրքերից ամենաքիչ տպաքանակ ունեցողը 1963 թւին տպագրուած «Ժամագիրք Աստնի»-ն է, որ ունի 176 էջ և որից տպագրուել է միայն 200 օրինակ։

Տպարանի առաջին շրջանի գրքերից 1647 թւին հրատարակուած «Գիրք տումարաց որ և պարզատումար կոչի»-գրքոյկից տպագրուել է 500 օրինակ։

Միւս ամենաշատ տպաքանակ ունեցող գրքերն եղել են դասագրքերը՝ 400 — 600 օրինակներով, իսկ վերջին տարիների ամենաշատ տպաքանակով գրքոյկն եղել է «Նոր Զուղայի բանգարան»-ը, 1000 օրինակ։

Տեղեկագրերը տպագրել են միջին հաշուով 100—200, իսկ որոշները 20—80 օրինակներով։ Օրացոյցներից մեր ձեռքի տակ ունեցած ցուցակում, ամենաշատ տպաքանակը ցոյց է տրուած մինչև 399 օրինակ, տպագրուած 1901 թուի համար։

2. Արժէք. — Գրքերի արժէքները, տպարանի հիմնման օրերին, բնականաբար եղել է շատ ցածր, հատորը 1-2 ռիալ, իսկ դարերի հետ և կեանքի թանկանալու համահաւասար, դրանց արժէքներն ևս սկսել են բարձրանալ։

«Պատմութիւն Նոր Զուղայի» գրքի երկու հատորի արժէքը, սկզբնական օրերին եղել է 6 ռիալ, իսկ «Աւագ Նարեկ»-ը՝ 5 ռիալ, որոնցից առաջինը դարձել է հազուագիւտ և այժմ վաճառուում է 1000—2000, իսկ վերջինը՝ 150—200 ռիալ արժէքով։

Նոր տպագրուած եկեղեցական գրքերից 1963 թուի «Ժամագիրք ատենի»-ն ունի 200 ռիալ, իսկ 1965 թուի «Մատեան»-ը 150 ռիալ արժէք։ *)

3. Լեզու. — Տպարանից լոյս տեսած առաջին գրքերի լեզուն, բնականաբար եղել է գրաբարը, մինչև որ 19-րդ դարի վերջերից սկսել են հրատարակուել նաև աշխարհաբար լեզուով գրքեր և կամաց-կամաց իրենց տեղը բոլորովին զիջել են վերջինին։

---

*) Տպագրուած գրքերի արժէքներով ցանկեր կան 1871 եւ 1879 թուերի «Հրահանգ Քրիստոնեական հաւատոյ», «Համառօտ պատմութիւն Ս. գրոց», 1885 եւ 1889 թուերի երացոյցների, 1900 թի «Դորձնական ֆերականութիւն» եւ այլ գրքերի կազմերի վրայ։

Մինչև այդ թուականները, հայերէն գրական լեզուն ամենուրեք ընդունուած էր գրաբարը, այնպէս որ Նոր-Ջուղան բացառութիւն չէր կարող կազմել և դրա համար էլ տպարանի հաստատման օրից սկսեալ բոլոր դրքերը, դասագրքերը, ազգերն ու յայտարարութիւնները, տպագրուում էին բացառաբար գրաբար լեզուով։

Հայ կեանքում տիրող ընդհանուր գարթօնքի ու վերելքի հետ, Նոր Ջուղան ևս յառաջադիմութիւն է արձանագրում և կամաց-կամաց գրաբարը տեղի է տալիս աշխարհաբարին։

Նոր Ջուղան որպէս կրօնական ու մշակութային կենտրոն, բնականաբար այնքան հեշտ էլ չպէտք է թողնէր նախնեաց սովորութիւնը և հէնց այդ նկատառումով էլ, դտնուել են անհատներ, որ մինչև վերջ. էլ չեն հաշտուել աշխարհաբարի հետ և հաշտ աչքով չեն նայել աշխարհաբար գրողներին։

Որպէս օրինակ, յիշատակութեան արժանի է Հնդկաստանում ապրող Ջուղայեցի յայտնի բանաստեղծ-մտաւորական Մեսրոպ Սէթեանցի անհանդուրժողականութիւնը, որ մինչև իր կեանքի վերջը՝ 1939 թ., անհաշտ պայքար տարաւ աշխարհաբարի դէմ, նոյն իսկ իր նամակները շարադրելով դրաբարեան պարզ ոճով։

Տպարանի առաջին աշխարհաբար դիրքը, այն էլ Ջուղայի բարբառով, կարծում ենք պէտք է համարել 1878 թուին տպագրուած Հ. Բագրատունու «Տարերք հիւսկանութեան» դիրքը, որը աշխարհաբարի է վերածել Տէր Մեսրոպ քհնյ. Դաւթեանը, որպէս ձեռնարկ օգտագործելու համար Հայոց Ազգային Դպրոցներում։

Ջուղայի տպարանի առաջին դասագիրքը, պէտք է համարել 1772 թուի «Այբբենարան»-ը, եթէ իհարկէ մինչ այդ խմորատիպով չեն եղել, որոնց մասին յիշատակութիւն կայ, բայց մենք չենք ուշնցել ձեռքի տակ։

4. Բովանդակություն. — Բովանդակության տեսակետից ևս, տպագրված գրքերը հնարաւոր չէ իմբաւորումների բաժանել։ Այս առթիւ կարելի է միայն ասել, որ ամենաշատ տպագրված գրքերն եղել են դասագրքերը, օրացոյցները, տեղեկագրերը, կրօնական ու եկեղեցական գրքերը և որոշ չափով էլ կենսագրական ու պատմական գրքերը։

Պատմական գրքերի մէջ ամենից արժէքաւորն ու կարևորը, պէտք է համարել Ցարութիւն Թ. Տէր Յովհաննեանի «Պատմութիւն Նոր Ջուղայու» երկհատորը, որոնցից առաջին հատորն ունի 497, իսկ Բ. հատորը՝ 317 էջ։

Տպագրված գրքերն ևս իրենց բովանդակության տեսակետից ուսումնասիրության մի առանձին նիւթ են, որոնք սերտօրէն առնչութիւն ունեն տիրող դարի, շրջանի մտածելակերպի, ժողովրդի հասկացողության ու իմբռնումների հետ։

Տեղին է այստեղ յիշել, որ բովանդակության և լեզուին կապող յիշատակելի գրքերից է Սեղբեստրոս իաչ. քհնյ. Յովհաննիսեանի «Ամիարհարար համառոս աղօրագիրք»-ը, տպագրված 1907 թուին, որով աղօթքները, կրօնական ասացուածքներն ու Պատարագը, իրենց գրաբարի տեղը գիջուած են աշխարհաբարին։

Տպագրված գրքերի մէջ կարևոր տեղ ունեն նաև թարգմանութիւնները, որոնք սկսուեցին 20-րդ դարի սկիզբներից և շարունակուեցին մինչև 20-ական թուականները։

Դրանցից յիշենք Եղնիկ վրդ. Երկարակեցեանի «Հրնդկական», «Ճապոնական» և այլ հեքիաթներն ու Տէր Գարեգին քհնյ. Կիրակոսեանի «Մարտիրոսացած Հայաստան» գրքերը։

Ց Ա Ն Կ

ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ՏՊԱՐԱՆԻՑ

ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԳՐՔԵՐԻ

1638 — 1972

Ժամանակագրական կարգով այստեղ տալիս ենք, Նոր Ջուղայի տպարանից լույս տեսած մեզ յայտնի բոլոր գրքերի ցանկը։

Գրքերի այս անունները ձեռք ենք բերել վանքի մատենապարանից, անհատական հաւաքածուներից, եկեղեցապատկան գրքերի միջից և գրքերում եղած յիշատակումներից։

Նիւթը շատ չընդարձակելու մտահոգութեամբ, լրիւ անուանաթերթերի փոխարէն այստեղ բերում ենք գրքերի խորագրերը, երբեմն միայն աւելի լայն տեղեկութիւններով, ինչպէս և բոլորի տպագրութեան թուականները, էջերն ու շարուածքի չափերը։

Անցեալում մենք վերցրել էինք գրքերի թղթի չափերը, բայց նկատելով, որ այդ չափերը նոյն գրքերը կազմելիս փոփոխութեան են ենթարկուում, ուստի կրկին անգամ սկսեցինք չափագրել շարուածքի վրայով։

Այս ցանկում կարելի է հանդիպել որոշ գրքերի, որոնք չունեն թուական, էջ կամ շարուածքի չափեր, այդպիսիները կամ տարեթիւը նշուած չի եղել, կամ թէ մենք չենք ունեցել ձեռքի տակ։ Մեր չտեսած գրքերը նշանակել ենք աստղանիշերով։

Սովորաբար բոլոր գրքերի անուանաթերթերում յիշուած են վայր ու տպարան, դրա համար էլ այդ գրութիւնները չենք բերում այստեղ, որոնք տպուած են հետեւեալ խորագրերով՝ «Նոր Ջուղա, տպարան Ս. Ամենափրկչեան վանուց», «Ի Նոր Ջուղա, ի տպարանի Ամենափրկչեան վանուց Նոր Ջուղա-Սպահան», «Նոր Ջուղա, տպարան Ս. Ամենափրկիչ վանքի» ... և այլն։

1638

1. ԱԱՌԱՔԱՍ ԴՅԻՑ

Հրատարակութիւն Խաչատուր վրդ. Կեսարացու, 1638 թ., էջ՝ 572, չափսաձք՝ 15.2 × 8.5 սմ.։

1641

2. ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

Հրատարակութիւն Խաչատուր վրդ. Կեսարացու, 1641 թ., էջ՝ 705, չափսաձք՝ 17.7 × 15.2 սմ. (երկսիւնակ)։

3. ԽՈՐՀՐԴԱՏԵՍՏ

Հրատարակութիւն Խաչատուր վրդ. Կեսարացու, 1641 թ., էջ՝ 48, չափսաձք՝ 17 × 13 սմ. (երկսիւնակ)։

1642

4. ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ

Հրատարակութիւն Խաչատուր վրդ. Կեսարացու, 1642 թ., էջ՝ 694 (ՈՂԴ) չհաշուած 12, չափսաձք՝ 17 × 13 սմ.։

Դրանցից.

Ամենափոքր վանքում եղած տիպական բիբլիան էջերը վերցրել են «Հ. հնատիպ գրքից» (1963 թ., էջ13.) եւ «Սիոն»-ից (1967 թ., Յուն.-Փետր. էջ՝ 59), վերջինում էջը լիքուած է նաեւ 701։

1647

5. ԳԻՐՔ ՏՈՒՄԱՐԱՅ ՈՐ ԵՒ ՊԱՐՉԱՏՈՒՄԱՐ ԿՈՉԻ

Հրատարակութիւն Յովհաննէս վրդ. Քթշենցի, 1647 թ., էջ՝ 84, չափսաձք՝ 8.9 × 6 սմ.։

1650

6. * ԱՍՏԻԱԾԱՇՈՒՆՉ,

(Թերի հրատարակութիւն),

Հրատարակութիւն Յովհաննէս վրդ. Քիրշենցի, 1650 (?) թ.,

7. * ՊՕՂՈՍԻ ԹՈՒՂԹՔ,

Հրատարակութիւն Յովհաննէս վարդապետ Քիրշենցի, 1650 (?) թ.,

1687

8. * ԳԻՐՔ ԵՏԵՆԱԿԱՆ ՈՐ ԱՍԻ Վ.ԻՃԱԲԱՆԱԿԱՆ,

Հեղինակ՝ Աղէքսանդր Ջուղայեցի, Հրատարակութիւն՝ Ստեփանոս Առաջնորդի, 1687 (Ռ.ՃԼԶ) թ., էջ՝ 288,

1688

9. ԳԻՐՔ ԺՈՂՈՎԱԾՈՑ ԸՆԴԴԷՄ ԵՐԿԱԲԱՆԱԿԱՑ, մանաւանդ ազխարհաւոր Ժողովոյն Քաղկեդոնի, առարանալ սրբազան վարդապետաց,

Հրատարակութիւն՝ Ստեփանոս Արքեպիսկոպոսի, 1688 թ, էջ՝ 764, չափսաձք 11 × 7.5 սմ.,

10. ԳԻՐՔ ՀԱՄԱՌՕՏ ՎԱՍՆ ԻՍԿԱՊԷՍ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՒԱՏՈՑ,

Բ. անուանաթերթ

ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՒ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ԱՆՈՒՂՂԻՑ,

Հեղինակ՝ Յովհաննէս վրդ. Ջուղայեցի (Մրքուզ),

---

*) Աստղանիշ գրքերը չենք ունցել ձեռքի տակ,

Հրատարակութիւն՝ Ստեփանոս Արքեպիսկոպոսի, 1688 թ., էջ՝ 16 + 364 = 380, չարաչափ՝ 8· 3 × 5· 3 սմ.։

1863

11. ՍՐԱՖՈՒՆ վասն ամի տեառն։ *1863* եւ Հայոց Ի Ց Ժ Բ։

Կազմեց՝ Նորընծայ Դիոնիսիոս Տէր Եղիազարեան, 1863, էջ՝ 34, ծաւալ՝ 10 5· 8 × սմ.։

1872

12. ԱՅԲԲԵՆԱՐԱՆ ի պէտս մանկանց։

1872 թ., էջ՝ 32, չարաչափ՝ 13, 8 × 7, 4 սմ, (շրջագրծով)։

Ծանօթ.- տեսնել «*Համառօտ պատմ. Ս. գրոց*»-ի վերջին տպագրած գրքերի ցանկը, Տիգրան Արզարեանը բաւականը գրել է *1870*, իսկ յաջորդինը՝ *1877*։

1873

13. ՄԻԱԿԱՆԱՆ ՍԱՂՄՈՍ ԴԱՒԻԹԻ ԿԱՄ ՀԵԳԱՐԱՆ Ի ՊԷՏՍ ՄԱՆԿԱՆՑ Դասագիրք Բ.։

Հրատարակութիւն՝ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոսի, 1873 թ. էջ՝ 48, չարաչափ 12, 7 × 7· 7 սմ։

Ծանօթ. *Շապիկի վրայ ունի միայն վերջին՝ «Հեզարան ի պէտս մանկանց» խորագիրը։*

1877

14. ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ։

Աշխարհաբարի թարգմանեց՝ Տէր Սեղբեստրոս քհնյ. Յովհաննիսեան, 1877 թ., էջ՝ 148, չարաչափ՝ 12· 2 × 8· 5 սմ։

15. ՀԱԻԱՏԱՊԱՏՈՒՄ, այն է մանր ուսմունք, Քրիստոնեական հաւատոյ։

Հեղինակ՝ Մսերայ Մագիստրոս, 1877 թ., էջ՝ 45, չարաչափ՝ 12×8. 3 սմ.։

1878

16. ՏԱՐԵՐՔ ՀԱՅԵՐԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ։

Հեղինակ՝ Հայր Արսէն Կոմիտասայ Բագրատունւոյ Մխիթարեանց։

Աշխարհաբարի թարգմանեց՝ Տէր Մեսրովբ Դաւթեանց։ Հրատարակութիւն Զուղայի ժողովրդի, 1878 թ. էջ՝ 312, չարաչափ 16. 2×11 սմ.։

17. ՍԱՍՈՅՆ 1878 թուին Քրիստոսի։

1878 թ. էջ՝ 34, ծաւալ՝ 10. 5×8 սմ.։

1870

18. ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ։

Հեղինակ՝ Ա. Մ. Գարագաշեան։

Թարգմանիչ՝ Աւետիք Կ. Մ. Զօհրաբեանց։

Հրատարակութիւն՝ Արդեամբ Բթաւիոյ հայոց, 1879 թ., էջ՝ 86, չարաչափ՝ 13. 2×7. 7 սմ.։

19. ՀՐԱՀԱՆԳ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՀԱԻԱՏՈՑ ԸՍՏ ՈՒՂՂԱՓԱՌ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ։

Հեղինակ՝ Մսերայ Մագիստրոս կրօնուսոյց վարժա-

պետի Լազարեան ձեմարանի։ 1879 թ.։ էջ՝ 207։ չափսաձք 13 2×8· 5 սմ.։

20· ՕՐԱՑՈՅՑ։ *1879* թուին Քրիստոսի *Ը.* *տարի։ 1879 թ.։ էջ՝ 87։ չափսաձք՝ 8· 7×5· 50 սմ.։*

1880

21· ՀԱՒԱՔՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՊԱՐՏՈՒՑ ՍՐԲՈՑ ԽՈՐՀՐԴՈՅՑ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ։

Աշխատասիրութեամբ Տէր Սեղբեստրոս քահնյ. Յովհաննիսեան Նոր Ջուղայեցւոյ։ 1880 թ. էջ՝ 29։ չափսաձք՝ 12· 6×8 սմ.։

22· ՆԿԱՐԱԳԻՐ ՀԱՆԴԻՍԻ ՏՕՆԻ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ։

Հեղինակ՝ Գէորգ Կ. Մ. Զօհրապեանց։ 1880 թ. էջ՝ 26։ չափսաձք՝ 16· 3×10· 5 սմ.։

23· ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ ՈՐ ՅԱՍՊԱՀԱՆ։

Աշխատասիրեալ՝ ի պ. Յարութիւն թ. Տէր Յովհաննեանց։ Հատոր առաջին։

Հրատարակութիւն Յովհաննու Յարութիւնեան։ 1880 թ. էջ՝ 497։ չափսաձք՝ 16×10 սմ.։

24· ՏԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿԱԳԻՐ կառավարչաց ընդհանուր կառավարչութեան հայ ազգային հասատութեանց Բրուսիոյ վասն 1879 ամի։

1880 թ.։ էջ՝ 21։ չափսաձք՝ 17×12 սմ.։

25· ՕՐԱՑՈՅՑ 1880 ՆԱՀԱՆՋ ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ։ *Բուն թուականին Հայոց 4372։ ի տօմարական թուականին Ազգիս Ա Յ Ի թ - 1329 Գ. տարի։ 1880 թ. էջ՝ 111։ չափսաձք 9· 9×5· 2 սմ.։*

26. ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՆԴՈՒՑԵԱԼ, ՍՐԲԱԶԱՆ ԹԱԴԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԲԷԳՆԱԶԱՐԵԱՆ ԲԱՐԵՅԻՇԱՏԱԿ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ ՍՐԲՈՅ Վ.ԱՆԱՑ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ,

Աշխատասիրեալ՝ Յարութիւն Թ. Տէր Յովհաննեանց,

Արդեամբք՝ Յովհաննու Յարութիւնեան, 1881 թ., էջ՝ 79, չափաչափ՝ 16. 3×10. 5 սմ.։

27. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՒ ՈՐ ՅԱՍՊԱՀԱՆ,

Աշխատասիրեալ՝ ի պ. Յարութիւն Թ. Տէր Յովհաննեանց, Հատոր երկրորդ,

Արդեամբք գերապատիւ պարոն Յովհաննու Յարութիւնեան, 1881 թ. էջ՝ 317, չափաչափ՝ 16×10 սմ.։

28. ՊԱՐՏԻԶԱԿ,

Շարադրեալ ի Մեսրովբ աւագ քահանայէ Փափազեան, 1881 թ., էջ՝ 52, չափաչափ՝ 16×10. 3 սմ.։

29. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՆ ՀԱՅՈՑ ՈՐ Ի ՃԱՒԱ,

Հեղինակ՝ Ֆան Լանսբերին,

Հոլանդերէնից թարգմանեց Խաչիկ Ա. Թովմաս, 1881 թ. էջ՝ 13, չափաչափ՝ 16. 3×10. 5 սմ.։

